Ցիրուցան եղան իղձերս, մայրի՛կ,
Արկերի ձայնից հօդս ցնդեցին։
Արյան գետեր են հոսում սարերից,
Սարսափ ներշնչում մատաղ իմ սրտին։
Արհավիրք է մա՛մ,կոտորած անգութ,
Ու կարծես սրտիս զարկերն են մարում։
Մա՛մ, դու ինձ ներիր,
Թե տուն չդառնամ,
Թե քեզ չգրկեմ, համբույր չստանաս։
Չարտասվես, մայր ի՛մ, հերոս է որդիդ,
Ու քեզ պահապան կլինի վերից՝
Որպես հրեշտակ, որպես լույս-ճրագ երկնի կամարից։

07.10.2020թ

*

* *

Հայրական տունը քարե շարվածք չի, վրան էլ՝ տանիք,
Այլ անսահման սիրո, հույսի, հավատի
Մի հրաշք անկյուն, ուր ամփոփվում է և՛ ծիծաղ, և՛ վիշտ,
Ուր դու ի սրտե կարող ես լացել,
Եվ քեզ թույլի պիտակ չեն կպցնի երբեք։
Կարող ես նաև գոռալ դու ցավից,
Հաստատ երկու ձեռք կճարվի նորից,
Որ քեզ պարուրվի, արցունքդ սրբի,
Գետնից բարձրացնի, մի լավ տաքացնի։
Այստեղ մայրական ջերմ համբույրների,
Սիրով համեմված համեղ ճաշերի,
Հայրական՝ անգին, կյանքի դասերի,

Որ ինձ խրատում, ոգի են տալիս,
Տարափ է, մարդի՛կ, ցնորքի հասցնող շատ, անչափելի։
Բա մեր պարտեզի բույրը, ո՞վ մարդիկ,
«Շանելը» հեչ է, անհամեմատելի,
Ծաղկունքն արբեցնող ու եդեմային։
Հայրական տան մեջ ամեն իր, անկյուն
Թանկ են, թանկագին՝ շաղախված հույսով ու հիշողությամբ։
Այստեղ կարող ես բոլոր հույզերիդ ազատություն տալ,
Չէ՞ որ քեզ ծաղրող, անկմանդ ուրախ
Աչքեր չես գտնի երբեք դու բնավ։
Այստեղ իմ հոգին հանգիստ է, խաղաղ,
Միտքս պարզ է միշտ, սիրտս էլ՝ շիտակ։
Եկե՛ք ընդունեք, որ կյանքի ճամփան ուր էլ մեզ տանի,
Ոտքերը, հաստատ, մեզ չենթարկվում,
Պտույտ են տալիս, նորից հետ գալիս։
Ա՜խր սիրտը մեր իր կանչը ունի,
Իր տունը ունի, ուր միշտ քեզ սպասող
Երկու հոգնատանջ, խոնավ աչքեր կան,
Որ քեզ են փնտրում, դռանը նայում,
Անվերջ անրջում դեմքդ մոռացված...

07.05.2014 թ.

*

* *

Մա՛յրս, սիրելի՛ս, ե՛կ կողքիս նստիր,
Գլուխս կուզեմ դնել քո ծնկին,
Ուզում եմ ափդ զգալ իմ այտին,
Խառնիր մազերս ու հետս խոսի՛ր,
Պատմի՛ր աշխարհի բյուր հրաշքներից,
Որ պիտի որդիդ իր աչքով տեսնի,

Երգի՛ր կորուսյալ մեր երկրի փառքից,
Որ մանչդ մի օր պիտի հետ բերի,
Ինձ պատմի՛ր, մա՛յր իմ,
Իմ ժողովրդի դաժան անցյալից,
Դե մի՛ արտասվիր, դու առյուծածին
Մայր ես տակավին,
Ում ձագը անգամ կյանքը կդնի զոհասեղանին,
Որ գեթ մեկ հայի իղձը կատարվի,
Որ գեթ մեկ մետր հող նա հետ բերի։
Ես իմ արյան մեջ կխեղդեմ նրան,
Ով իր նզովյալ ոտքով կկոխի հողն իմ հայրենի,
Ու իր հիվանդոտ թոքով կշնչի օդը իմ երկրի։
Ես հայ եմ, մայրի՛կ, պապերիս ոգին ինձ միշտ զորավիգ,
Անգամ թե պակաս գարուններ ապրեմ,
Անգամ թե պակաս համբույրներ տամ քեզ,
Դու մի բան հիշի՛ր՝ հողս չեմ զիջի ամեն ԹՇՎԱՌԻ....

09.05.2015 թ.

*

* *

Լուռ է քաղաքը, տխուր են մարդիկ,
Սևազգեստ մայրեր կանգնել են հերթի,
Եռաբլուրում են այսուհետ որդիք։
Ողբում են, կանչում իրենց կորյունին,
Ծնկի են գալիս, փարվում շիրիմին,
Ու լալիս են լուռ՝
Արյուն-արտասուք խառնելով հողին։
Մի՞թե դաժան չէ մեր կյանքը, մարդի՛կ,
Որ հայրը պիտի որդու դագաղը իր ուսին առնի,
Իսկ ո՞ւր մնացին օրենք ու կանոն,
Չէ՞ որ որդին էր հորը պարտավոր...

11.04.2016 թ.

*

* *

Լուռ են սարերը Հայոց աշխարհի,
Մռայլ է դեմքը հայրենի երկրիս,
Քոչվոր ցեղերը պոծել են ուզում հողը պապերիս,
Մեզ պանդուխտ շինել, մեր երկրից հանել,
Քշել հեռուներ, մեր տանը տիրել։
Նզովյա՛լ իժեր, որ փաթաթվել եք
Հայի ոտքերին, քայլ անգամ անել նրան չեք տալիս,
Սև ամպի նման կանգնել եք գլխին,
Նորից ուզում եք արյուն անձրևել սիրուն դաշտերին,
Ու առատորեն հագուրդ տալ գարնան չքնաղ ծաղկունքին։
Եթե այդպես է, նզովում եմ ձեզ,
Թող որ չորանա արգանդը ձեր մոր,
Որ ծնունդ տվեց հարյուր հազարով
Անկուշտ գայլերի, որ պետք է
Մատղաշ կյանքեր լափեն։
Անիծում եմ ձեզ իմ ողջ էությամբ,
Որ ձեր ձեռքերով կեղտոտ մարել
Տվեցիք քանի հարյուր կյանք։
Արյան համն առած վամպիրի նման
Ելել եք որսի, որ բաց չթողնեք
Անգամ մի ձագի, որ ձեր նմանից
Հողն է նա պահում հայրենի երկրի։
Նրանք ձեր ձայնից կուչ գալ չգիտեն,
Այլ անդուր լեզուն արմատից կտրել,
Որ վնգաք միայն ու չհամարձակվեք
Ի լուր աշխարհի նորից դուք կրկնել.
- Սա մեր երկիրն է։
Դուք ո՞ւմ շունն էիք, երբ հայն էր

Քարը քարին շարում, ժայռից տուն շինում։
Ա՞խր որպես ազգ դուք անգամ չկաք
Պատմություն կոչվող անխոս վկայի գոնե մեկ էջում։
Կույր ու լուռ աշխա՛րհ, դու էլ ես փակել ականջները քո,
Որ հայի կանչին անհաղորդ մնաս,
Հեռու դու մնաս նրա վշտերին։
Աստված զորավիգ զինվորի բազկին,
Որ կսատկացնի անկուշտ գազանին,
Ձեզ էլ անտարբե՛ր, եսասեր ազգեր,
Մի օր Բարձրյալը կտա հայու վերք...

19.04.2016 թ.

*

* *

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔԱՋԵՐԻՆ

Տե՛ր, խնդրում եմ քեզ՝ դու մեզ ներես,
Որ մենք ապրում ենք կարծես կույրի պես,
Ու չենք նկատում մենք մեր մեջ ապրող
Մոնթե ու Նժդեհ,
Բայց օրհասական պահերին, նրանք
Ոտքի են ելնում ու պաշտպան
Կանգնում հայրենի հողին,
Ու չեն վախենում՝ կյանքը նվիրել հանուն կյանքերի։
Սիրելի՛ մարդիկ, ձեզ խնդրանք ունեմ,
Ուշադի՛ր եղեք ձեր կողքին ապրող հայորդիներին,
Նրանք են միակ երաշխիքը ձեր գալիք օրերի։
Նրանք ձեզ համար սովորական են գուցե կենցաղով,
Բայց երբ օրը գա, զինվոր կկոչվեն,
Կամ էլ զորապետ իրենց քաջ գործով։

22.04.2016 թ.

*

* *

Անունս հայ է, մայրս՝ Հայաստան,
Հայրս էլ Արցախ, տատ ու պապերս՝
Դվին ու Էրզրում,
Որ մնացել են թուրքի ձեռքերում։
Ա՜խ, որքան դժբախտ զավակ եմ, իմ Տե՛ր,
Որ ընտանիքս պառակտվել է, տե՛ս,
Ամեն մի հրեշ մեկին գողացել, իրենն է կոչել։
Որքան տկար եմ որպես և ժառանգ,
Որ ավերակին պիտի տեր կանգնեմ։
Մի՞թե արժան եմ այսպիսի բախտի,
Որ իմ սիրտը լա ծնվելու պահից։
Այսքան տանջված ազգ չի եղել երբեք
Աշխարհի վրա մարդկության կյանքում։
Որ լինի գիտուն, այսքան իմաստուն,
Բայց միշտ տանուլ տա գոյապայքարում,
Որ ապացուցի քոչվոր ազերուն,
Թե ինքն է տերը այն մի բուռ հողի,
Որի վրա դեռ շա՜տ դարեր առաջ
Պապն է իր ստեղծել գյուղեր ու քաղաք։
Իսկ ո՞ւր մնացիր դու՝ արդարություն,
Որ թուրքը փոխել կուզի պատմություն...

29.04.2016 թ.

*

* *

Ցիրուցան եղած հայի իղձերից գեթ մեկը կոչել ես կուզեմ կյանքի,

Երանի՜ դառնամ հողը պապերիս՝ համբույր բաշխելով ամեն մի քարի,
Ողողանջն առնեմ բյուր կոթողների և գամ ես ծնկի նրանց դռներին։
Արդեն կարոտից նվաղած սրտով արցունք ես քամեմ ցամքած աչքերից,
Սառած հայացքս կարոտով լեցուն՝ ուղղեմ Մասիսի չքնաղ գագաթին,
Պաղպաջուն առվից ծարավս առնեմ չորացած բերնով,
Անշտապ քայլքով, եռանդուն ոգով հասնեմ Անիիս շեմին դարավոր,
Նայեմ սյուներին, սուրբ պատկերներին տիրոջ աչքերով,
Ուրախ մանկան պես անհոգ ժպիտով լիաթոք շնչեմ օդը իմ երկրի,
Թև առնեմ, թռչեմ կապույտ լազուրում անհոգ թռչնի պես,
Յուրայիններիս հետ ելնեմ ես պարի, քոչարի բռնենք Մասիսի լանջին,
Ուխտեմ պաշտպանել հողս արյունով, շնչով իմ վերջին,
Նախքան ես կելնեմ աշխարհը վերին՝ անմեղ զոհերին պարտքս հանձնելով։

02.05.2016 թ.

*

* *

Աշխարհի բոլոր մայրերն անխտիր
Մեր խոնարհմանն են արժանի, մարդի՛կ։
Նրանք են միակ սուրբ արարածները երկրի երեսին,
Ովքեր արարում, ծնունդ են տալիս մարդկային կյանքին։
Նրանց է միայն Աստված շնորհել, իրավունք տվել
Ծնել ու սնել իր ընտրյալներին,
Որ իրենց պատգամով շեն պիտի պահեն ընթացքը կյանքի։
Բայց հայ մայրերը տարբերվում են միշտ
Աշխարհի բոլոր կինարմատներից,
Քանի որ նրանք որդի են ծնում միշտ գիտակցաբար,
Առաջին հերթին՝ որպես զինվորի, որպես պաշտպանի՝
Հայրենի երկրին ցմահ նվիրված։
Ա՛խր, հայ մայրը չի ընկրկում, չէ՛,
Դժվարին պահին իր մինուճարին

Մատաղ էլ կանի ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ,
Իր որդու արյամբ հագուրդ էլ կտա թուրքի ծարավին,
Որ նա չփորձի սահմանը խախտել մեր Հայաստանի։
Հայ մայրը սուրբ է, հպարտ է, մարդի՛կ,
Նա իր սեփական ձեռքով կփորի գերեզմանը սև,
Ուր հերոս որդին վերջին հանգրվան պիտի դեռ գտնի,
Երբեք թույլ չի տա, որ դավաճանի պես
Օտար երկրներ սողեսող փախչի։
Նրանց առաջ մենք ծնկի պետք է գանք,
Որ գիտակցաբար կորյուն են ծնում, ազգին նվիրում,
Ու չեն ափսոսում անգամ այն դեպքում,
Երբ որդին հավետ երկինք է ճախրում՝
Ազգին, իր երկրին պարտքը հանձնելով....

08.05.2016 թ.

*

* *

Ո՞վ է վանդակել քեզ, իմ խե՛ղճ ընկեր,
Ո՞վ է քեզ բռնել կեղտոտ ձեռքի մեջ։
Իմ սիրո՛ւն թռչնակ, լուռ ես դու, տրտում,
Ինչպե՞ս քեզ օգնեմ, հոգիս է տխուր,
Ինչպե՞ս ազատեմ քեզ այդ կապանքից
Ու նվեր անեմ Հայոց աշխարհին։
Ես քեզ կգտնեմ, ես քեզ կփրկեմ,
Թեկուզ և հոգիս ես մատաղ անեմ։
Դու պիտի ճախրես, պիտի սավառնես
Լազուր կապույտում, երկնի կամարում,
Ուր մեր հայացքն ենք անվերջ ուղղում,
Երբ հույսի վերջին ճրագն է մարում։
Իմ ճերմակաթև, սիրո՛ւն աղավնի,

Հիմա դու թռի՛ր դեպ կապույտ երկինք
Ու ազատության շնչով վարակիր
Բոլոր բոլորին, որ հույսը թաղած՝
Գերի են դարձել մռայլ զնդանին։
Գնա՛ ու հայտնի՛ր անգամ ոսոխին,
Որ հայի հողում անգամ թռչնակին
Գերի չեն առնում, ոչ էլ բանտարկում,
Առավել ևս՝ անդադար տանջում.....

22.05.2016 թ.

*

* *

Գարունը կարծես իր ներկապնակով
Իջևանն է իմ, վերից վար ներկել,
Ու բաց չի թողել անգամ քարաշեն
Հսկա շենքերի բակ ու տանիքներ։
Սեր է նա ցողել ամեն մի մայթի,
Ամեն արձանի շունչ է նա տվել,
Որ մեզ հետ երգի սիրո երգերը՝
Գարնան շնչով լի։
Նայում եմ շուրջս, անվերջ հիանում.
Ծիածանն ինքն է վրձինը առել
Ու ամեն գույնից մի քիչ տարածել
Արդեն շա՜տ վաղուց գորշ գույներ հագած
Սիրուն քաղաքիս ամեն մի մետրին։
Սիրտս ցավում է, երբ հիշում եմ ես
Բոլոր-բոլորին, որ էլ չեն շնչի
Օդը շատ մաքուր ու գարնանային,
Որ էլ չեն առնի իրենց ձեռքերին
Սիրուն փնջերը առաջին ծաղկի՝

Կապույտ աչքերով ճերմակ ձնծաղկի։
Նրանց յարերն էլ արցունք կցողեն հրաշք դաշտերին՝
Աղոթքն ուղղելով հեռու երկնքին։
Գարունը կյանքն է, նա ավետիսն է նորի ծննդի։
Ես շա՛տ եմ ուզում, որ մենք դեռ երկար իրար հանդիպենք,
Իրար ողջունենք հարազատի պես,
Ու խոստանում եմ անվերջ ես երգել,
Անվերջ գովերգել սիրո եղանակ,
Հրա՛շք գարուն քեզ։

27.02.2017 թ.

*

* *

Ամեն դուռ ու փեղկ բա՛ց թողեք, մարդի՛կ,
Գարունն է գալիս, որ ձեզ ջերմացնի,
Որ ձեզ արթնացնի ձմեռվա քնից։
Ամեն մի ծաղիկ իր խորհուրդն ունի,
Ասելիքն ունի մեր բիրտ աշխարհին։
Նրանք մեր սերն են, որ ծնվում են միշտ
Նույն եղանակին ու չեն ուշանում։
Իսկ թռչնակների անարատ երգը
Կարծես դարման է մեր ականջների,
Որ գույժ լսելուց հոգնել են, զզվել
Արդեն մեկ տարի։
Սիրու՛ն օրիորդներ, դուք էլ պատրաստվեք,
Հարսնատես գալու օրերն են սկսվել։
Նվեր ու ծաղիկ մենք ձեզ կուղարկենք,
Որ լոկ մի ժպիտ ձեզանից կորզենք։
Ձեզ համար երգեր կգրենք մենք շա՛տ,
Որ դուք միշտ լսեք ու ուրախանաք։

Մայթով անցնելիս ձեր ձեռքին, մազին,
Որ դիտմամբ կպչենք, հանկարծ
Զգոռաք ու թատրոն սարքեք,
Դա, մեր մեջ ասած, ռեֆլեքս է կարծես.
Ամեն չքնաղ բան մագնիսի նման
Զգում է անվերջ։
Մենք մեղավոր չենք, որ դուք սիրուն եք,
Իսկ մենք՝ սրատես, որ նկատում ենք
Ամբոխի միջից հենց աչքերը ձեր։

11.03.2017 թ.

*

* *

Եթե ինձ հարցնեն ատե՞լ, թե՞ սիրել,
Ես անխոս կասեմ՝ իհարկե սիրել,
Չէ՞ որ ատելով մենք սպանում ենք
Մեր ԵՍ-ը հավետ։
Ատելությունը ժանգ է ահավոր,
Որ կեղեքում է մարդկանց
Հոգիներ՝ հարյուր հազարով։
Բայց ես ատում եմ որոշ դևերի,
Որոնք ապրում են՝ շնչելով օդը,
Կոխելով հողը դարավոր երկրիս։
Նրանց մարդուկներ մենք պետք է կոչենք
Կամ էլ անպիտան արարածներ,
Ովքեր նողկանքիս ու արհամարհանքիս
Պիտի սպասեն, նույնիսկ երազեն։
Ես նրանց անգամ ոտքի տակ ընկած
Հող չեմ անվանի,
Չէ՞ որ այդ հողը սուրբ է, պաշտելի։

Այդ հրեշները սեփական շահին
Երկրորդել գիտեն դրոշ, հայրենիք։
Հազար անգամ ես ատում եմ նաև
Այն որդի կոչված բութ վիժվածքներին,
Ովքեր փայլում են կարճ հիշողությամբ՝
Ոտնատակ տալով ծնող, ընտանիք։
Անիծում եմ ձեզ, ո՜վ տկարամիտ արատավորներ,
Որ պղծել գիտեք նման արժեքներ....

07.08.2017 թ.

*

* *

Կյանքում ամեն մարդ երեք
Պարտք ունի՝ ուսերին դրած՝
Աստծուն, իր երկրին, մեկ էլ ծնողին՝
Իրեն կյանք տված։
Աստծուն ծառա ենք մենք մեր հավատքով,
Երկրին՝ մեր ուժով ու նվիրումով,
Ծնողին՝ կյանքով, անսահման սիրով։
Չէ՞ որ նրանք են անտես ձեռքի պես
Ուղեկից լինում, մեզ միշտ աջակցում,
Անվերջ պաշտպանում, հենարան դառնում։
Նրանք մեր հույսն են, նրանք մեր լույսն են
Խավար աշխարհում,
Վահան են ասես այն լեզուներին,
Որ մեզ փորձում են կարծես մերկացնել,
Ծաղրուծանակի անվերջ ենթարկել։
Նրանք մաքուրն են, սուրբ ու սրբածին,
Որ դիմադրում են այս պիղծ բարքերին։
Նրանց աղոթքը անվերջ է, անմար,

Ուղղված Աստծուն՝ հանուն մեր պաշտպանության։

Նրանք մեզ կյանք են նվիրում մի օր,

Որ իմաստավորենք իրենց կյանքն

Արդեն ամեն Աստծու օր։

Ուշ երեկոյան նստում են թախտին՝

Աչքը հառելով հեռու աստղերին,

Ու խնդրում նրանց ճամփան

Լույս անել իրենց ձագերի,

Որ արագ հասնեն տունը հայրենի...

09.08.2017 թ.

*

* *

Ամեն մարդ կյանքում իր գանգատն ունի.

Մեկը գրպանի դատարկությունից բողոք միշտ կանի,

Մեկը՝ մեր երկրի ծանր վիճակից,

Մեկ այլ շնչավոր՝ բախտ գրողներից,

Որ իր համար լավ չեն մտածել

Ու նոր չեն գրել ճակատի գիրը։

Դժվար է լսել բոլոր բոլորին,

Ցավերը՝ տարբեր, պահանջները՝ հաճախ սին։

Ես էլ, սակայն, ունեմ իմ գանգատը, Տե՛ր.

Ես դժգոհում եմ իմ ժամանակից,

Այն չի հերիքում. որքան շտապում,

Արագ եմ շարժվում, էլի կիսատ են գործերս մնում,

Ու դա տանջում է, անդորրս խախտում։

Ա՜խր շատերին խոստում եմ տվել,

Որ պետք է կյանքում ամեն ինչ հասցնեմ։

Քսանչորս ժամին նույնքան էլ դնես,

Մեկ է, բավ չէ ինձ, դժվար թե հասցնեմ։

Ա՜խր իմ սիրտը իր զարկով անգամ
Ծառա է մարդկանց ու մինչ կանգնելը
Պետք է արարի, պարտքերը հանձնի.
Գլուխ պահելը իմ սրտի գործ չէ։
Խնդրում եմ, Տե՛ր իմ, լոկ ժամս ձգի՛ր,
Սրտիս զարկերը նաև խնայիր,
Ես իմ խորհուրդը դեռ պետք է ի կատար ածեմ,
Առաքելությունս էլ ավարտին հասցնեմ,
Որ դու չափսոսաս՝ ինչո՞ւ կյանք տվիր,
Ես էլ չափսոսամ՝ ինչո՞ւ ծնվեցի…

*

* *

Ասում եք՝ կարոտը գույն չունի՞.
Դուք սխալվում եք. նա իր գույնն ունի,
Սև է, ո՜վ մարդիկ, գույնը կարոտի,
Որ խամրել կտա անգամ
Կապույտը լազուր երկնքի,
Նաև կարմիրը կիզիչ արևի,
Բազում աստղերի արծաթը
Անգամ նրան չի հաղթի։
Ասում եք՝ կարոտը ձեռքեր չունի՞։
Իհարկե ունի, այն էլ շա՜տ երկար,
Որ դաժան ձևով ու առանց գութի
Կոկորդդ բռնել, խեղդել կփորձի։
Ասում եք՝ կարոտը ձայն չունի՞.
Ես համաձայն չեմ. բա ո՞ւր մնացին
Լացի ձայները, ողբի ճիչերը,
Որ արձագանքում են ամեն տնակից։
Ասում եք՝ կարոտը հիշել չգիտի՞։

Դուք հո չե՞ք գժվել. բա՞ ծնած ձագին,
Նրա պատկերին, սիրուն ժպիտին,
Զնգուն ծիծաղին, դալար հասակին,
Բարակ մատներին, փայլող աչքերին
Երազող մայրը ձեզ դա կների՞:
Կարոտը դաժան պատիժ է, մարդի՛կ,
Որ ծնկի է բերում անգամ
Հաղթանդամ հզոր այրերի,
Սարի պես ուժեղ, պարտվել չիմացող
Քաջ մարտիկների:
Ուզում ես գրկել, բայց ստվերն է միայն,
Ինքն այլևս հեռու, հեռու քեզ ու քո վշտին:
Ամեն իր կարծես բույր է տարածում,
Նրանց մեջ ասես հոտն է ԿԱՐՈՏԻԴ,
Որ այլևս դու երբեք չես առնի....

07.12.2017 թ.

*

* *

Եթե ինձ հարցնեն, թե ո՞ր ծաղիկն եմ
Կյանքում նախընտրում, ապա ես կասեմ.
- Ալ վարդն եմ սիրում:
Հիմա բացատրեմ ընտրությունը իմ,
Որ դուք հասկանաք նվազիս հոգին:
- Նրա մեջ կյանքի խորհուրդն է, մարդի՛կ:
Կարմիրը գույնն է մարդկանց արյունի, անմար արևի,
Բոցավառ սիրո, ուժգին կարոտի:
Իսկ նրա փուշը պատիժն է Աստծո,
Վատ արարքների, անմիտ քայլերի
Եվ ուրացման մեր սուրբ հավատքի:

Իսկ բույրը, մարդի՛կ, ապրեցնող լույսն է համայն աշխարհի։
Ամեն մի տերև՝ ճամփին հանդիպած,
Լա՛վ ու վա՛տ մարդիկ,
Արժեք է մեծ։
Ցողունը նրա մեր արահետն է,
Երկրային ճամփան, որ ցույց է տալիս
Սկիզբը կյանքի, ապա՝ ավարտը։
Վարդի արմատը մեր հետքն է, մարդի՛կ,
Թե արժեք ունի, մյուս անգամ էլ վարդը կծաղկի,
Թե անարժեք է մեր կյանքը եղել,
Ապա առհավետ նա կչորանա,
Որ մաքրի, տանի մեր իսկ անունը երկրի երեսից։
Այս ծաղիկը հույսն է հավերժի,
Որ մի օր, մի տեղ կծնվենք նորից...

27.05.2018 թ.

*

* *

Այնպես եմ ուզում, որ մի օր տեսնեմ
Հարսի սպիտակ շորերը հագիդ
Ու ձյունաճերմակ քողն էլ քո գլխին։
Որպես հայուհի, նուրբ գեղեցկուհի՝
Շիկնած այտերով ինձ սպասեիր,
Որ քեզ թևանցուկ հորդ օջախից
Ես դուրս տանեի,
Վարդի թերթերով զարդարված ճամփով
Դեպի սուրբ խորան քեզ ուղեկցեի,
Որ երդում տայինք Աստծո տաճարում
Սիրել միշտ իրար, հարգել ու պատվել մինչև գերեզման։
Դու ինձ երդվեիր հեզություն հավետ,
Ես էլ քո կյանքին՝ տեր ու ապվեն։

Ու երբ ես առնեմ քեզ իմ ձեռքերին,
Մակարավանքի հինավուրց շեմին
Դու կհասկանաս, որ հանուն սիրո
Արժե և՛ ծնվել մյուս կյանքերում...

08.02.2019 թ.

*

* *

Ես էլ, դու էլ ճամփորդներ ենք այս կյանքում,
Որ եկել ենք ու մեր պայքարն ենք մղում,
Մեկս՝ ուժեղ, մեկս՝ թույլ, հասկացի՛ր,
Բայց ձեռք ծալել, տեղում նստել
Մենք չենք կարող, գիտակցի՛ր։
Ով կարող է, սարն է ելնում դժվարին,
Ով չի կարող, ձորի միջով պիտ քայլի։
Մեկը ուժգին ոտքն է զարկում մայր հողին,
Մեկ ուրիշը սողեսող է տկար կյանքը քարշ տալիս։
Ե՛կ՝ հասկանանք, եղբա՛յր ազնիվ, քաջասիրտ,
Թե այս կյանքում արծիվ լինել չստացվի,
Ես որ հաստատ ծնկած ապրել չեմ փորձի։
Մարդը պետք է արժևորի ամեն բան,
Ու սկսի իր անունից, որ պիտ թողնի, նոր գնա....

06.04.2018 թ.

*

* *

Տատս հարցնում է.
-Պատմաբա՛ն բալա, դե՛ հլը ասա,
Թուրքն ո՞վ է, նա ինչացո՞ւ է։

-Ա՛խր, ա՛յ տատի, ամեն շնչավոր
Հո՛ ով չի կոչվում. որոշների համար
Պետք է գործածել մեկ այլ
Տարբերակ ու հարցնել արդեն
Ոչ թե ո՞վ, այլ՝ ի՞նչ։
Գազան է, տատի՛, բայց երկոտանի,
Ոռնալ չգիտի, բայց մարդ հոշոտել
Նա շատ լավ գիտի։
Գիշերով քնել կարծես չունի,
Բայց բու չի, տատի՛,
Գիշատիչ անգղ է, աչքեր կհանի,
Ոչ էլ փորսող է, բայց լավ կխայթի։
Ո՞նց ասեմ, տատի՛,
Մեր խեղճ աշխարհի
Ժանգն է քայքայիչ,
Բիծն է ամոթի,
Որ չի վերանում
Ու հանգիստ թողնում
Տանջված հայերիս...

05.09.2018 թ.

*

* *

Ասում են՝ երբ մահու հրեշտակը
Իր թևերն է փռում, որ մահվան մահճից
Մեր հոգին առնի ու երկինք տանի,
Մարդու կյանքը՝ որպես սև ու սպիտակ կինոժապավեն,
Սրընթաց ձևով առջևով անցնում
Ու հիշեցնում է ուրախ ու տխուր օրերը բոլոր,
Վերելք ու վայրէջք, ծափ ու քարկոծում։

Այնպես կուզեմ, որ այդ մեկ վայրկյանում
Ես չհանդիպեմ գոնե մի պատկեր, գոնե մի դրվագ, որ ես ափսոսամ
Ապրած-չապրածիս, արած-չարածիս համար։
Այլ լայն ժպիտով ճամփա ես գցեմ ապրած օրերս,
Որ հետայսու անցյալ կկոչեք։
Ես երազում եմ, որ էլ չսխալվեմ ու չսայթաքեմ,
Որ պատվով հասնեմ ինձ բաժին հասած ճամփի ավարտին։
Ես պայքարում եմ գիշեր ու ցերեկ,
Որ ինձնից հետո ընկեր, բարեկամ, անգամ լոկ ծանոթ
Անունս տալիս շիկնելու պատճառ բնավ չունենան,
Գլուխ չկախեն, ամոթ էլ չզգան նրանք ինձ համար։
Ուզում եմ հողը ինձնից գոհ լինի, ես էլ՝ իրենից,
Թողնի, որ ամուր, երկու ոտքերով ես կանգնեմ գետնին։
Հետո էլ, երբ նա իր գիրկը առնի, հառաչանք քաշի ու ինձ ափսոսա։
Նաև ուզում եմ պարզ ճակատ կանգնել Բարձրյալի առաջ,
Ու նրա դատից երկյուղ ես չզգամ....

10.11.2018 թ.

*

* *

Ասում են՝ կյանքում ով չի երազում,
Նա աննպատակ օր է գլորում,
Չի արժևորում ժամանակ կոչվող գանձը թանկագին,
Որ մեզ տրվել է վերուստ՝
Աստծուց մեծ պարգև։
Մեկը ծնվում է, մանուկ էլ մնում,
Մյուսը՝ ընդմիշտ պատանի կոչվում,
Մեկն էլ ազգային հերոս է դառնում,
Մյուսն էլ ապրում է շատ երկար օրեր,
Ու նա հասցնում է թոռ ու ծոռ գրկել։

Ամեն ինչ կյանքում հարաբերական է,
Ե՛վ մեր ժամերը, և՛ տարիները, և՛ կյանքը անգին։
Երազելով մենք թևեր ենք առնում,
Պլաններ կազմում, ծրագրեր գծում,
Ու միշտ մտածում. «Վաղը կանեմ, հաստատ կհասցնեմ»։
Դու քեզ սխալմամբ Աստված ես կարգել,
Ու չափ որոշել, երազանքներդ լոկ թղթին հանձնել։
Նախ ոտքի կանգնի՛ր ու երազանքիդ դու շո՛ւնչ հաղորդիր,
Որ քեզ հենց այսօր նա ծառայեցնի հրաշք գործերի։
Ա՜խր, սիրելի՛ս, ԿՅԱՆՔԸ ԵՐԱԶ Է,
Մինչև արթնանաս, մեկ էլ սթափվես,
Կպարզվի՝ կյանքիդ գնացքը վաղուց
Կողքովդ անցել, դու չես նկատել։
Երազանքները ապրեցնում են մեզ,
Բայց քանի դեռ դու գործել չփորձես,
Անիմաստ է քո ապրելն էլ կարծես,
Ա՜խր, հասկացի՛ր, բոլոր այն մարդիկ,
Ովքեր տեղյակ են իրենց դատավճռին,
Հազար երանի են նրանք միշտ տալիս
Քեզ նման հիմար դատարկի բախտին,
Որ դեռ տարիներ անմիտի նման
Կյանքի իմաստը պիտի որոնի....

09.11.2018 թ.

*

* *

В моей душе слышна лишь мелодия дождя,
На струнах сердце моего лишь играет друг мой-ветерок,
И в тишине, сидя за сталом,
Я разговариваю лишь самим собой.

Я вспоминаю те дни, порой,

Когда мы были счастливы вдвоём,

Когда сидя на берегу реки,

Мы ждали заката солнца,

А потом, за руку держась

Считали все звёзды на небе.

Я скучаю, жду, надеюсь на встречу,

И даже, если судьба не готовит нам встреч,

То я, всё же, любить не перестану,

Ни на миг, ни на час,

И даже на целую вечность.....

2018 г.

*

* *

Երկար ծամերով, բարակ իրանով,

Լուսե աչքերով, մետաքսե մաշկով

Մի չքնաղ օրիորդ ամեն առավոտ

Շատ պատահաբար կամ միտումնավոր

Ինձ դեմ հանդիման կարծես հրաշքով

Աղստև գետի փոքրիկ կամրջին

Հայտնվում է միշտ ուղիղ նույն ժամին։

Նա ինձ ժպտում է, կարմրում հանկարծ,

Ապա շփոթվում՝ իրար խառնված։

Ես չեմ հասկանում՝ ինչո՞ւ է գալիս,

Եթե բառ անգամ խոսել չի տալիս։

Մեկ էլ տեսնում եմ՝ կարծես շանթահար

Նա փախչում է հետ՝ դեպի լսարան։

Ուզում եմ մեկ-մեկ ես նրան հարցնել.

- Դու նկարի՞չ ես, ինձ էլ բնորդ ե՞ս

Քեզ ուզում կարգել։
Եթե այդպես է, դու մի՛ երկմտիր,
Ես համաձայն եմ, ե՛կ ինձ նկարիր։
Գուցե՞ երգիչ ես, ուզում ես երգել,
Իմ մասին պետք է նոր երգդ հյուսես։
Ես դեմ չեմ, երգի՛ր, ծափերի մասին
Հեչ մի՛ մտածիր։
Թե՞ բանաստեղծ ես, գրել ես ուզում,
Ի՞նչ ասեմ, գրի՛ր, թուղթ ու թանաքի
Պակաս չեմ թողնի։
Թե՞ սիրահար ես, դու հոգիդ բացի՛ր,
Ես հո՞ գազան չեմ, քեզ չեմ նեղացնի։
Գուցե քեզ լսեմ, երկար մտածեմ,
Սրտիս գաղտնիքը հենց քեզ վստահեմ։
Սիրո՛ւն հայուհի, երազի՛ փերի,
Ախր փախչելով հո՞ հարց չես լուծի։

08.02.2019 թ.

*

* *

Երկու առկայծող սևորակ աչքեր
Միշտ ինձ են կանչում հեռու-հեռուներ,
Գիշեր ու ցերեկ որպես խելագար
Նրանց մեջ նայել կուզեմ անդադար։
Ա՜խր նրանց մեջ հոգիս է ապրում,
Ա՜խր նրանց մեջ կյանքս է ամփոփվում,
Իմ սրտի գաղտնի արտացոլանքն եմ
Նրանց մեջ տեսնում։
Նրա լույս դեմքին կարծես իր վերջին
Վրձնահարվածն է տվել Դա Վինչին,

Իսկ նրա նրբին մարմինն էլ ասես
Միքելանջելոյի ձեռքով է թրծվել։
Նա կատարյալ է ու ոչ հողեղեն։
Ես էլ մերօրյա Դանթեն եմ կարծես
Ու գովերգում եմ քեզ՝ հրաշք «Բեատրիչես»։
Խոսքերս գուցե աղքատիկ թվան,
Մտքերս լինեն լավ չշաղկապված,
Տեսքս՝ ոչ արժան քո գեղեցկության,
Ունեցածս էլ լո՛կ մանրադրամ՝
Ուսանողական հինգ հազար դրամ,
Բայց կարողությունս միլիոն կարժենա։
Այսօր թոշակն է ուսանողական,
Վաղն էլ հաշիվը շվեյցարական։
Ամեն ինչ կյանքում հեքիաթ կթվա,
Թե հույս աղջիկը միշտ կողքիս մնա,
Ու իր խոսքերով հզոր թևեր տա։
Մնում է միայն նա դա հասկանա.....

02.04.2019 թ.

*

* *

Սուտ ու փուչ աշխարհ,
Խորթ ես դու, օտար,
Բիրտ ու դաժան ես
Իմ հոգու համար։
Ես պայքարում եմ,
Իսկ դու՝ ինձ ծաղրում,
Սիրել եմ ուզում,
Ատել ես ստիպում։
Նաև ուզում եմ
Վերև ես թռչել,

Բայց դու կտրում ես
Թևերս լուսե։
Ես ծիծաղում եմ,
Դու լաց ես սպասում,
Ինչի՞ ենք ապրում,
Եթե զուտ տանջանք,
Զրկանք ենք տեսնում։
Գո՞ւցե Աստված է
Փորձություն տալիս,
Որ հետո պահի
Դրախտի՞ միջին։
Եթե այդպես է,
Թեկուզև՛ պայքար,
Թեկուզև՛ կռիվ,
Համաձայն եմ ես,
Էլ չեմ բողոքի,
Միայն կփորձեմ
Հուսախաբ չանել
Մեծն Բարձրյալին...

04.12.2019 թ.

*

* *

Երբեք ես փառքի դափնի չեմ փնտրել,
Ոչ էլ պատվանդան, ուր իմ արձանը պիտի վեր հառնի,
Երբեք չեմ սպասել գովեստի խոսքի, որ ինձ շոյի։
Իմ ճամփան հարթել երբեք չեմ խնդրել,
Օգնության ձեռքեր ես չեմ որոնել,
Ես լոկ իմ տեղն եմ փորձել վաստակել
Զուր մրցավազքում ամբոխ կոչվածի։

Ես տարբերվելու փորձեր չեմ արել,
Բայց և նմանվել զուր չեմ ցանկացել։
Ես արահետս իմ ձեռքով գծել,
Լուսնի արծաթով միշտ լուսավորել,
Ընկել եմ, ելել, անվերջ պայքարել,
Անընդհատ քայլել ու միշտ աղոթել,
Որ նպատակիս զոնե մոտ լինեմ։
Ասում են՝ կյանքը շարժում է անվերջ,
Ե՛կ՝ աննպատակ ժամ չգլորենք,
Այլ փառքով օծենք գալիք օրը մեր,
Եկող դարերին հպատակ դարձնենք
Մեր վեհ գործերին ու սուրբ հավատքին...

01.07.2019 թ.

*

* *

Մա՛յր, ապա նայի՛ր դու այս մշտավառ
Չքնաղ աստղերին,
Որ մեզ են ժպտում հեռու երկնքից։
Նրանք պատմում են բյուր հազարների
Ապրածի մասին, նաև չապրածի,
Որ չհասցրին այս նենգ աշխարհում։
Ասում են՝ մարդիկ աստղեր են դառնում։
Մի՞թե հրաշք չէ դառնալ լուսատու,
Որ պետք է մարդկանց ուղղորդի կյանքում,
Նրանց հույս բաշխի, նաև վառ հավատ…
Եթե այս կյանքում անկում ենք ապրում,
Ապա ելնել էլ է մենք չենք մոռանում,
Երբ հույսը կամանց վերջին է հասնում,

Նայում ենք վերև, երազանք պահում։
Մեկ-մեկ երբ աստղ է ընկնում ցած,
Մենք ոգևորված հրաշք ենք ուզում՝
Երկար սպասված։
Հասկանում ես, մա՛յր, երբ աստղ դառնամ,
Ես էլի կապրեմ, էլի կժպտամ,
Կույրին ես աչքեր կտամ վերևից,
Որ չմոլորվի խավարի ճամփին։
Ես միշտ կլինեմ թեկուզ և հեռվում,
Մարդկանց՝ հուսատու, անմար լուսատու.....

07.07.2019 թ.

*

* *

Մի խենթ ու խելառ եկել հարցնում է.
- Դու գազանանոցում եղե՞լ ես։
Ա՛յ անմիտ էակ, կյանքը տեղով գազանանոց է,
Ամեն կենդանի դու կհանդիպես,
Բայց սողուներ ու գիշատիչներ,
Ինչքա՛ն որ կուզես։
Այստեղ առյուծ կտրած աղվեսներ կան շատ,
Ու նաև արծվի թռիչքի ձգտող փետրահան հավեր,
Իրենց սոխակ կարծող կռռան ագռավներ
Ու սիրամարգ համարվող լիքը կաչաղակներ։
Սողուներին էլ չափ-քանակ չկա,
Որոնք կարծում են՝ բացի սողալուց
Առաջ գնալու ուրիշ ձև չկա։
Վտանգ են նաև «հավատարմության»
Սիմվոլ համարվող
Անդեմ քաջերը, որ շնագայլ են ծնունդով կոչվում։

Այս ամենի մեջ ոտնատակ արինք էլ քաջ արծիվին, հաղթանդամ արջին,
Անբիծ աղավնուն ու միակ ճշմարիտ քաջն առյուծին։
Դե՛ հիմա լսիր, մենք էլ ենք մասը այդ «ուրախ» կյանքի։
Մնում է միայն քեզ չհոշոտեն ու խաղից հանեն և դեն շպրտեն,
Դու էլ բնազդդ փորձիր գործածել ու քեզ պաշտպանել,
Թեկուզ սրածայր քո ատամներով կամ էլ ճանկերով,
Իսկ թռիչքը քո չփոխես քայլքի։
Անգամ քառսում դու ԵՍ-դ պահի՛ր,
Ու մի խառնվիր ամենքի խմբին,
Լոկ նրա համար, որ մի քիչ երկար
Պիտի դու ապրես երկրի երեսին։
Արժանապատվությունը դեռ չի վերացել,
Ու ամեն արարած իր փոքրիկ սրտի
Մեծ տեղը միշտ էլ պետք է նրան հատկնացնի,
Որ իր գոյությամբ չնսեմացվի...

09.07.2019 թ.

*

* *

Ամեն արարած գաղտնի իղձեր է
Իր սրտում պահում, թաքուն փայփայում,
Ու միշտ հավատում, որ օրն է գալու,
Ու երազանքը կյանք է առնելու։
Ես երազում եմ մի առյուծ որդի,
Ով իմ պատկերով հաստատ կլինի,
Ու հորս անվամբ պիտի նա կոչվի,
Աշխարհին տիրել իր խոսքով փորձի,
Իսկ հայրենիքիս միշտ պաշտպան կանգնի։
Ում ես կկանչեմ, մա՛նչս, ձագո՛ւկս,
Իմ սրտի, հոգու վա՛ռ արեգակս,

Ինձ թևեր տվող փոքրի՛կ հրաշքս։
Տեսնես՝ երբ կառնեմ նման մի ձագի
Ես իմ ձեռքերին
Ու ջերմ համբույրներ կտամ այտերին։
Ա՜խ Տե՛ր, ինձ լսի՛ր
Ու երազանքս օրհնանքով պահի՛ր...

11.08.2019 թ.

*

* *

(Մա՛մ, արի մեր տան ավանդույթը փոխենք։
Մոռացել էի ասեմ, որ հարսդ ուսուցչուհի չի լինելու (ծիծաղ)**:**
Մասնագիտություններ մենք շատ-շատ ունենք.
Է՛լ ճարտարապետ, է՛լ քանդակագործ,
Բժիշկ, հոգեբան, գրող, դերասան,
Նաև աստղաբան...
Շղթան շատ մեծ է, դժվար է հիշել բոլոր-բոլորին,
Բոլորն էլ ունեն կարևորություն մարդկության կյանքում
Իրենց բնույթով, նաև խորհրդով։
Բայց ամենից շատ, ամենից առաջ
Ես ընդունում եմ ձեզ՝ մանկավարժներ։
Դուք եք ակունքը, աղբյուրը կյանքի,
Որ կրթում եք մեզ ու դաստիարակում,
Մարդ արարածից անհատ եք շինում,
Որ նա պիտանի լինի այս կյանքում
Իր ապրելուց զատ՝ նաև ճիշտ գործով։
Դուք ուղղորդում եք, որ կյանքի խաչվող ճամփեքի վրա
Մենք ճիշտ կածանով միշտ առաջ գնանք։
Երկար տարիներ քրտինք թափելով՝ հղկում եք դուք մեզ
Ու միշտ մտածում, որ գալիք օրը

Վստահ ձեռքերում թողեցիք, հաստատ։
Տարիներն անդարձ հեռանում են լուռ,
Փոխվում են միայն սան ու նստարան, գուցե՝ դասարան,
Դուք նույնն եք մնում, միայն մազերն են անվերջ ճերմակում։
Ձեր նվիրումը գործին ու երկրին
Երդման պես հավերժ, անխախտ է, ուժգին։
Փառք ձեզ, մեծանուն ո՜վ նվիրյալներ,
Որ կերտում եք դուք վաղվա օրը մեր...

08.09.2019 թ.

*

* *

Ասում են՝ կյանքը բեմ է, մարդիկ՝ դերասան,
Դե՛, եկ լրացնենք այս միտքը հիմա,
Իսկ Արարիչն էլ մեծ բեմադրիչ է,
Ով հաշվի առնել նույնիսկ չի փորձում
Կողքից այլ կարծիք։
Ընբոստանալու ես խնդիր չունեմ,
Քանի դեռ դերս անգիր չգիտեմ։
Բայց մեկ-մեկ վախը իր գործն է անում,
Անորոշությունն է ինձ հունից հանում։
Ես չեմ հասկանում՝ գլխավո՞ր դերն է
Ինձ բաժին հասնում,
Թե՞ խեղկատակի, որ մարդկանց
Պետք է ծիծաղ բաժանի։
Իմ դերը, արդյոք, շատ կարևո՞ր է,
Թե՞ անկարևոր, որ չի նկատվում
Եվ ոչ էլ հիշվում։
Ես շատ կուզեի գոնե երազում դերս քննարկել,
Գուցե մենք փոխենք որոշ դրվագներ,

Բայց կխնդրեի զուր չբորբոքվել, դերս չխլել։
Ես բեմից իջնել հիմա չեմ ուզում,
Ծափերի ձայնն եմ անվերջ երազում։
Ուզում եմ վերջում իմ աչքով տեսնել,
Ականջով լսել, թե ողջ աշխարհը
Ոնց է հոտնկայս ինձ ծափահարում...

04.11.2019 թ.

*

* *

Իմ ավա՛գ ընկեր, իմ գիտո՛ւն ընկեր,
Այնքա՜ն ուրախ եմ, որ ես Ձեզ գիտեմ,
Որ ես կարող եմ Ձեզ հետ զրուցել,
Խոհերս պատմել, անվերջ քննարկել,
Ձեր խորհուրդներից նորից ուժ առնել,
Կիսատ թողածս մինչև վերջ հասցնել։
Երբ Դուք հայրաբար ուսս եք սեղմում,
Դա նշան է, որ ես ճիշտ եմ քայլում
Մեր այս խորդուբորդ կյանքի ճամփեքում,
Երբ մեղմ ժպիտով խոսքս եք կտրում,
Ես հասկանում եմ՝ շատ եմ վեր թռչում,
Անկման բութ ցավը հաշվի չեմ առնում։
Երբ ամեն անգամ հայելու առաջ
Փողկապս եմ գժված ձգում ձախ ու աջ,
Ու երբ լեփ-լեցուն դահլիճի առաջ
Ճառս եմ փորձում մատուցել մարդկանց,
Երբ անծանոթին ողջույնս տված՝
Փորձում եմ մեկ էլ ձեռք պարզել առաջ,
Ես ջերմ ժպիտով հիշում եմ կրկին
Բոլոր դասերը, որ տվել եք ինձ։

Երբ երեկոյան գրքի էջերն եմ

Թերթում հապշտապ,

Փորձում եմ արագ ճիշտ տողեր գտնել

Ու գաղտնազերծել մտքերը բոլոր՝

Ձեր կողմից ասված,

Կյանքի դասերը, հոգու գանձերը,

Այն խորհուրդները,

Որ ինձ եք տալիս ամեն հանդիպման:

Դուք ինձ թևեր եք նվիրում կյանքում,

Նաև հուշում եք ճիշտ նշանակետ,

Ու ես անպայման դեռ պիտի հասնեմ Տիրոջ օրհնությամբ:

Անչափ հպարտ եմ, որ Ձեր սանն եմ ես,

Կաշխատեմ կյանքում հուսախաբ չանել,

Առավել ևս՝ թևերս ջարդել

Ու իմ փոխարեն ամաչել տալ Ձեզ...

Հարգարժան՝ Հովսեփ Մովսիսյանին

07.12.2019 թ.

*

* *

Ալ վարդը ձեռքիս, կոստյումը հագիս,

Դեմքս խոժոռված, միտքս ցիրուցան՝

Դանդաղ քայլերով հասա ձեր տան մոտ:

Նայում եմ վերև՝ ձեր առանձնատան բարձր հարկերին,

Ու փնտրում եմ ես լո՛կ մի պատուհան,

Որտեղից գոնե դեմքդ կտեսնեմ:

Նայեցի վերև. հարկերն են բազում,

Պատուհաններին թիվ, հաշիվ չկա:

Ես էլ մոլորված մնացի կանգնած

Ու չհասկացա՝ ինչ անել հիմա:

Ձեռքս դողալով մեկնել եմ զանգին,

Սիրտս ասում է՝ հե՛տ դարձ ու փախի՛ր։
Մտքի տարափից, վախի ճնշումից,
Հետ-հետ գնացի, շուրջս նայեցի,
Մենակ ես էի, վայրի վարդենին
Ու մի նստարան՝ իր դարը ապրած,
Որ ինձ ընդունեց ու իր գիրկը առավ։
Մի քիչ թիկնեցի ու լուռ խորհեցի,
Ես ու մտքերս բախվեցինք իրար,
Հասկացա, որ իմ հոգին հանգիստ չէ,
Սիրտս էլ կարծես ուզում է թռչել
Դեպի հեռուներ ու իր իսկական կեսին գտնել։
Երկար մտածել ես չկամեցա,
Այլ սրտիս խորքից բարձր գոչեցի.
- Չեմ սիրում, ների՛ր, գտի՛ր ուրիշին։
Լավ է մենք հիմա իրար նզովենք,
Քան հետագայում դառը արտասվենք։
Եթե կարող ենք մենք ճիշտ որոշել,
Ինչո՞ւ անիմաստ կործանենք կյանքեր։
Ես փնտրեմ ԻՄԸ, իսկ դու էլ՝ ՔՈՆԸ,
Որ մենք հասկանանք կյանքի իմաստը.
Չէ՞ որ սիրելն էլ ապրելու նման
Մեկանգամյա է, հավերժ, հավիտյան։
Հետո հեռացա և էլ հետ չեկա
Ես այդ փողոցով ու այդ տան մոտով՝
Կապող, չկապող թելերը բոլոր ինձ հետ տանելով։

29.12.2019 թ.

*

* *

Ամեն անգամ, երբ գրիչը ձեռքիս

Ուզում եմ կրկին ես իրար կապել երկու սիրուն միտք,
Իմ մեջ կռիվ են սկսում նորից երկու ԵՍ-երս՝
Ուրախ ու տխուր, բայց միշտ միասին։
Մեկն ինձ ասում է՝ կարող ես փորձել,
Մյուսն ասում է՝ վերջին չես հասնի։
Մեկը հուշում է երջանիկ օրեր,
Մյուսն էլ ասում է՝ շատ չերազես։
Հիմա չգիտեմ՝ հաղթո՞ղ կլինեմ, թե՞ գուցե պարտվող,
Բայց որ կփորձեմ քայլել միշտ առաջ,
Դեպի ուրախ օր.
Դա անվիճելի փաստ է այսուհետ։
Իմ երկո՛ւ ԵՍ-եր, հասկացե՛ք հիմա,
Ոչ թե վիճում եմ, այլ հրամայում,
Որ միանա՛ք դուք, հենց հիմա դառնա՛ք ամբողջական ԵՍ....

15.01.2020 թ.

*

* *

Ասում են՝ կյանքում ով եղբայր չունի,
Նա անհենարան միշտ պիտի ապրի,
Եկ ես բացառեմ այդ միտքը, մարդի՛կ,
Քրոջ քաղցրություն ոչ մեկը չունի։
Ես, որ քրոջս հազար եղբոր հետ անգամ չեմ փոխի,
Ձախորդ օրերիս խինդ ու ծիծաղն է,
Իմ դեղ ու ճարն է, նաև՝ հանճարն է,
Նա ինձ պայքարի ուժ է հաղորդում,
Թևեր է տալիս, որ ճախրեմ երկինք,
Որ հաղթեմ վախին, խեղդող մտքերին,
Դաժան բարքերին, մարդկանց կրքերին։
Որ կյանք կոչված այս մեծ մրցավազքում

Առաջինը տեղը միշտ իմը լինի,
Որ երջանկությունն իմ սրտում լինի,
Որ իր զրնգուն, անզուսպ ծիծաղով իմ հոգին լցնի,
Մեկ էլ մայրն է լոկ այսքան ջերմություն իր որդուն տալիս,
Որ դու ինձ տվիր։
Շնորհակալ եմ, Տե՛ր իմ ողորմած, մա՛յր իմ սրբասուրբ
Եվ ճակատագի՛ր՝ հանելուկ դարձած,
Որ քույրս միշտ կա, իմ կողքին է միշտ...

26.01.2020 թ.

*

* *

Տե՛ր իմ ողորմած, ծնկի եմ գալիս
Մակարավանքի այս սուրբ մատուռում
Ու երդվում եմ ես՝ իմ ողջ էությամբ
Սիրում եմ նրան ու նաև պաշտում։
Խելագարի պես նրան եմ փնտրում,
Ձայն եմ տալիս ես, ձայնս չի լսում,
Արդյոք տեսի՞լք է, երա՞զ եմ տեսնում։
Ես Սուրբ Սարգիսից օրհնանք եմ խնդրում,
Թող սերս պահի հեռու ու թաքուն։
Հիմա էլ նստել գյուղիս բարձունքում,
Փակել աչքերս ու միտք եմ անում,
Մի՞թե ցնորք է, և ինձ եմ խաբում,
Հեքիաթ եմ հյուսում ու հրեշտակին հողածին շինում...

08.02.2020 թ.

*

* *

Դե՛ եկ, սիրելի՛ս, երդում ենք տալու այս սուրբ խորանում,
Որ ես քեզ տեր եմ, դու էլ հնազանդ հարս ես լինելու,
Որ քեզ թագուհի պիտի ես կարգեմ հորս օջախում,
Անսահման սիրով կյանքդ ողողեմ,
Քեզ միշտ պաշտպանեմ ու գովաբանեմ,
Ու հարատևենք այդ սուրբ օրրանում։
Բայց մի բան արի մենք պարզաբանենք,
Մորս ես վաղուց հենց նույն օջախում
Աստված եմ կոչել,
Ում դու հասնելու զուր փորձեր չանես։
Նրա սիրուն էլ հենց արժանանաս,
Իմ մեծ հարգանքը հավերժ կստանաս։
Արի դու դարձի՛ր ոչ թե լոկ հարսիկ,
Այլ մեր օջախի նորաթուխ աղջիկ։
Առանց ձևերի, առանց դերերի,
Միայն պարզճակատ դու տո՛ւնս մտիր,
Որ ես ափսոսանք չունենամ կյանքում,
Դու էլ հասկանաս՝ որ հեքիաթում ես,
Բայց բաց աչքերով, ոչ թե երազում....

27.02.2020 թ.

*

* *

Որպես պատմաբան ես մի բան գիտեմ,
Որ ով աշխարհին տիրել ցանկանա,
Կա՛մ զենքի ուժով պիտի զորանա,
Կա՛մ էլ ճոխ լեզվի արվեստն իմանա։
Եթե ուզում եք ձեր խոսքով հաղթել
Ամեն դեսպանի, ամեն միջնորդի,
Ուրեմն լսե՛ք դիտարկումը ձեր խոնարհ ծառայի.
Նախ հրաժարվեք դիմել թարգմանչի,

Որպեսզի խոսքդ համոզիչ լինի,
Պետք է հուզական ջիղը միշտ իշխի,
Մի քիչ դերասան, մի քիչ լեզվաբան,
Մի քիչ հոգեբան, ա՛յ քեզ լավ դեսպան։
Իսկ հաղթաթուղթը, որը պետք կգա,
Դա մեր դարախեղդ լեզուն է, հարկավ,
Որ անվանում ենք լեզու անգլիական։
Ինչ էլ որ գիտես, զրո կդարձնեն,
Թե անգլերենից գլուխ չհանես։
Տառերը խորթ են, բայց ուսուցիչս ամենակարող,
Օգնում է, որ ես օտարի լեզուն
Արագ ընկալեմ ու իմը դարձնեմ։
Դժվար է, գիտեմ, հավատալ խոսքիս,
Բայց հրաշագործ մասնագետը միշտ
Ինձ պես լեռնեցուն ճիշտ հղկել գիտի։
Այնպես որ եկեք Շեքսպիրի խոսքով սկիզբը դնենք.
"To be or not to be"...
Ես իմ բաժինը՝ ԼԻՆԵԼԸ, հաստատ, կփորձեմ ընտրել...
Իմ ամենակարող Շ. Գրիգորյանին

14.04.2020 թ.

*

* *

Իմ լա՛վ ընկերներ, իմ թա՛նկ ընկերներ,
Եղբայր եմ ուզում այսօր ձեզ կոչել,
Քանի որ դուք եք ինձ միշտ աջակցել,
Վիշտ ու ծիծաղս հավասար կիսել,
Որ ծանրությունը անարդար կյանքի
Ես շատ հեշտ տանեմ։
Ամեն անգամ, երբ անդունդի եզրով
Հույսերս մարած՝ հասնում եմ վերջին,

Մեկ էլ տեսնում եմ՝ եղբայր-տղերքը
Կանգնած են կողքիս։
Մեկ-մեկ երբ կողքից նայում եմ կյանքիս,
Ես նախանձում եմ ունեցած բախտիս,
Որ հանդիպել եմ արծիվ տղերքի,
Ու հասկացել եմ, որ ձեր արժեքը
Ուրիշ մարդ չունի։
Ձեզ հետ իմ կերած բրդուճին անգամ
Հազար գուրմաններ երանի կտան.
Չէ՞ որ դրա մեջ մի համեմունք է միայն գործածված,
Որ սեր է կոչվում՝ մեծ, եղբայրական։
Ձեզ հետ քայլում եմ տխուր փողոցով,
Բայց մի վայրկյանում զնգուն ծիծաղով փոխում եք դեմքը
Ե՛վ այդ փողոցի, և՛ մեծ քաղաքի։
Կենդանություն եք պարգևում կրկին
Մարդկանց քարացած, լքված սրտերին։
Ա՜խ, տե՛ր իմ, Աստվա՛ծ, պահպանի՛ր նրանց,
Որ ազգակից չեն, ոչ էլ բարեկամ,
Մեր երակներում հոսող արյունն էլ նույնը չէ, բնավ,
Բայց նրանք իմն են, հոգուս հարազատ,
Կյանքով որոշված ու ճակատագրով հաստատված արդեն,
Եղբայրներն են իմ մինչև գերեզման։
Թե ճիշտը կուզեք, մահն էլ է անզոր,
Ու հաջորդ կյանքում մենք իրար նորից
Հաստատ կգտնենք. չէ՞ որ կապված ենք անտես թելերով։
Թե՛ երկրի վրա, թե՛ տիեզերքում,
Անգամ հավերժում դուք իմ եղբայրն եք այսուհետ կոչվում....

08.06.2020 թ.

*

* *

Ասում են. «Հող էիր, հո՛ղ դարձիր...»:
Արդյոք կհասցնե՞մ մինչ հող դառնալս
Հետագիծ թողնել համայն աշխարհում,
Որ մարդիկ քայլեն իմ անցած ճամփով,
Փառքիս բարձունքին նրանք էլ կանգնեն,
Իմ անկման ձորում նրանք էլ լինեն,
Իմ աչքո՛վ նրանք նայեն արևին,
Որ ինձ ջերմացրեց իմ ցուրտ օրերին:
Ապա լուռ բռնեն կածանի ճամփան,
Ուր ամփոփվում են երազ ու բաղձանք,
Որ ես կթողնեմ թերի, անավարտ…
Հետո հայրական օջախիս շեմին,
Կփորձեն զգալ շունչն իմ կորսված,
Որ հար-հարատև պիտի զգացվի
Իմ բնօրրանում, ծնողքիս սրտում...

21.06.2020 թ.

*

* *

Սերս աշխարհին կուզեմ ես պատմել,
Կուզեմ ես երգել, նրան գովերգել,
Մարդկանց էլ խնդրել՝ այն չկործանեն,
Այն չտրորեն, չոտնահարեն
Երբեք ծաղրանքի այն չենթարկեն:
Ու եթե մի օր ես էլ չլինեմ,
Նրան չտեսնեմ, նրան չդիպչեմ,
Ես էլ լուռ հանգչեմ շատ շատերի պես,
Դուք նրան սիրեք, նրան սփոփեք,
Նրան ուժ տվեք, հենարան եղեք:
Նա է իմ սրտի գաղտնի հատորը,

Որ չեք կարդացել, անգամ չեք թերթել։
Ում էլ որ հասնի իմ բաժին սերը,
Թող նա լավ հիշի՝ հաջորդ կյանքերում,
Հավերժի գրկում այդ լույս աղջիկը ի՛մն է լինելու...

20.07.2020 թ.

*

* *

Քայլում եմ մենակ փողոցով մթին,
Կռիվ եմ տալիս ես ինքս ինձ հետ,
Ու բռնում եմ ինձ այն մտքի վրա,
Որ ես չափազանց ուղիղ եմ նայում մարդկանց աչքերին։
Կարծես փորձում եմ հասնել հատակին մարդկային հոգու։
Փնտրում եմ ոմանց կործանված հոգուց թեկուզ մի նշույլ,
Որոշների մեջ ինձ եմ որոնում։
Գուցե ես էլ եմ ստվերների պես
ԵսՍ սպառել ու անէացել։
Քայլում եմ, քայլում ու չեմ հասկանում՝
Մինչև երբ կամ ուր պիտի ես քայլեմ,
Մինչ լուսի՞ն, աստղե՞ր, թե՞ հավերժություն...

25.07.2020 թ.

*

* *

Բոլորն այս կյանքում մայր են գովերգում,
Սիրելի՛ հայրիկ, իսկ ես իմ երգը քեզ եմ նվիրում։
Ես քո ճերմակած ամեն մի վարսին պարտք ունեմ տալու,
Տանջված ձեռքերիդ՝ խոնարհում, համբույր։
Դու իմ երջանիկ ամեն վայրկյանին

Քո դժվար կյանքից օր պարգևեցիր,
Իսկ իմ արծվային թռիչքի համար
Քո իսկ թևերը կտրել տվեցիր։
Այնպես եմ ուզում, որ գաս՝ ինձ գտնես,
Քո զորեղ բազկով շատ ամուր գրկես,
Նայես աչքերիս, հոգով խաղաղվես,
Վերքիս, ցասմանս դեղ ու ճար գտնես։
Երկար զրուցես աշխարհի ցավից,
Մարդկային վայրագ, անզուսպ խաղերից,
Ու քաոս կոչվող այս դաժան կյանքից։
Իմ հպա՛րտ հայրիկ, անկոտրու՛մ հայրիկ,
Այնպես կուզեի կնճռապատ դեմքիդ
Գոնե մեկ անգամ ձեռքս դիպցնել,
Սառած շուրթերով այտերիդ հպվել
Ու բաժանումի համբույրներ դաջել։
Հրաժեշտի պես կարծես ստացվեց,
Դու ինձ կներես, սի՛րտս պահանջեց...

... 09.2020 թ.

*

* *

Աշխարհի՛ մայրեր, ձեզ խնդրանք ունեմ.
Երբ ձեր զավակի թոթովանքն անգին,
Արդեն դառնում է տանը լսելի,
Ականջին հաճո, ձայնով գրավիչ,
Դուք էլ մայրաբար փորձում եք շտկել
Սխալները ձեր փոքրիկ մանկիկի,
Հիշեք, որ կյանքում խոսել կարող են բոլորն անխտիր,
Մեկը գրավիչ, մեկը շատ հակիրճ,
Մեկը շատ դանդաղ, մյուսն էլ՝ արագ,
Նրանք կարող են խոսքերը կապել ։

Ավելի լավ է սովորեցրեք
Լռել սովորել…
Չէ՞ որ խոսելը շատ հեշտ է, մարդի՛կ,
Լռելն է սակայն դժվարն այս կյանքի։
Լռելով մարդիկ կյանքեր են փրկում, նաև՝ ընտանիք,
Երկիր են պահում, հարգանք վաստակում,
Ու գնահատվում են հավուր պատշաճի։
Խոսելու արվեստ մենք սովորել ենք,
Բայց լեզուն պահել փակ բերանի մեջ,
Ու դուրս չթողնել, դեռ չենք սովորել։
Չէ՞ որ մենք գիտենք երկու բառ կապել,
Որ հար բարբաջենք կյանքի «մեծ դասեր…»։
Կյանքում շահում են միայն այն մարդիկ,
Ովքեր լռում են անհրաժեշտ պահին...

29.09.2015 թ.

*

* *

Բոլոր մարդկանց պես ես էլ
Իմ փոքրիկ թուլությունն ունեմ.
Ես խենթի նման պաշտում եմ
Բոլոր երեխաներին այս երկրի վրա,
Ովքեր ինձ համար հրեշտակներ են,
Թեկուզև թևեր չի տվել Աստված։
Նրանց ծիծաղը ապրեցնում է
Անհույս հիվանդին, տանջված սրտերին,
Նրանց ժպիտը խամրեցնում է անգամ արևին,
Ու արծաթափայլ անթիվ աստղերին։
Մանկան պարզ, մաքուր աչքերի խորքում
Այս արատավոր, պղծված դարերի

Անմեղությունն է կարծես թե ապրում։
Աղջիկ թե տղա, անգին են, մարդի՛կ.
Չէ՞ որ նրանք են ծաղիկը կյանքի,
Հույսը գալիքի, վաղվա օրերի։
Որպես հայորդի՝ ես երդվում եմ, Տե՛ր,
Որ դեռ յոթ որդով սեղան կնստեմ,
Նույնքան էլ սիրուն, թիթիզ աղջիկներ
Ինձ հայր կկոչեն։
Մեր փոքրիկ ազգին միշտ են հարկավոր
Ծնվող նոր մարդիկ,
Ովքեր կդառնան հայի սերնդի հրաշքը ներկա,
Ինչո՞ւ չէ, նաև հզոր ապագան...

07.11.2019 թ.

*

* *

Անձրև՛, դու ցողա գարնան դաշտերին,
Մաքրի՛ր, քեզ հետ տա՛ր վշտերը հայի,
Թող որ չքանա գարնան արևից
Արյան հոտը մեր նահատակների։
Անձրև՛, խնդրում եմ, միայն հորդ արի,
Այնպես դու թափվիր մոխրագույն ամպից,
Որ քո ցասումով ոչնչացնես անկուշտ ոսոխին։
Այնպե՛ս դու տեղա մեր երկրին, հողին,
Որ խելագարվեն գետերը լռին,
Չճանաչելով կամուրջ ու պատնեշ՝
Քանդեն թշնամու տուն ու մզկիթներ,
Պետք չէ՝ ոսոխին գթան կամ խղճան։
Անձրև՛, քեզ հետ բեր նաև կարկուտի ահռելի գնդեր,
Որ տեղան վերից թշնամու գլխին,
Բաց վերքեր թողնեն տհաճ դեմքերին,

Որ արև բացվի, ու նրանց լեշը գրավիչ լինի վայրի անգղերին։
Թող որ հոշոտվեն գել ու գազանից,
Ինչպես հայերը նրանց նմանից…
Անձրև՛, լվա դու վերքերը հայի,
Որ արդեն մի դար, կաթիլ առ կաթիլ
Արյամբ են ներկում լանջը Մասիսի ։
Մասիսը ճերմակ հսկա էր ահեղ,
Իսկ հիմա դարձավ արնաներկ կանթեղ,
Որ կանչում է մեզ, օգնություն խնդրում,
Ազատություն է մեզնից աղերսում,
Ախր հասկացե՛ք, վրեժ է տենչում
Մեզնից շա՛տ հեռու, բայց մեր մեջ
Ապրող Մասիսը գերի։
Նաև քեզ հետ բեր կայծակ ու ամպրոպ,
Որ շանթահարեն թուրքին ոճրագործ։
Թող քեզնից հետո արևը ժպտա միայն հայ մանչին,
Իսկ ծիածանը կամարը կապի Մասիսի գլխին…

24.04.2015 թ.

*

* *

Թեհլերյաննե՛ր, ոտքի՛ ելեք,
Դատաստանի ժամն է եկել։
Մեր պապերի հոգիները
Դեռ չեն գտել հանգստություն,
Ուշանում են, ա՛խր մարդի՛կ,
Հայի վրեժ ու հատուցում։
Եկե՛ք զարկենք բռունցքներս միասնական,
Ասենք ապա մեր աղոթքը տերունական,
Հետո քայլենք դեպի սարը բիբլիական,

Որ գամվել է տանջված հայի
Անցյալ-ներկա արնոտ ճամփի
Հենց կենտրոնում ու չի շարժվում։
Ա՜խր ներկան անցյալից է սկիզբ առնում,
Մենք չենք կարող մաքրել ճամփան,
Որով կտրել, անցել ենք Վան,
Ապա եկել դեպ արևելք
Ու կառուցել նոր տունուտեղ։
Մենք քոչվոր չենք, բայց քշվել ենք
Յաթաղանի սուր հարվածից։
Մենք անտուն չենք, բայց տունը մեր
Բաց երկինքն է թուրքը թողել։
Մենք չենք ուզում, որ մեզ խղճան,
Բայց մեր սիրտը սրախողխող ցանց է դարձել,
Որ մաղում է արյուն-արցունք,
Բայց հանգիստը իր չի գտնում։
Իմ եղբայրնե՛ր, կոչս լսե՛ք, կողքիս կանգնե՛ք,
Ա՜խր այսպես ապրելն արդեն
Հավասար է չապրած կյանքի։
Պիտի փորձենք արյան դիմաց
Արյուն քամել կեղտոտ թուրքից,
Ու ստիպենք՝ ծնկի իջնել հայի առաջ։
Ինձ հասկացե՛ք, խնդրում եմ ձեզ.
Լավ է՝ ընկնեմ ահեղ մարտում
Թուրքի զարկից, բութ հարվածից,
Գիտակցված մահս առնեմ՝
Հանուն ազգի ազատության,
Անկախ երկրի, խաղաղության,
Քան թե անտես ստվերի պես անվերջ ողբամ
Իմ կորուսյալ հզոր երկրի վերջը դաժան։
Դուք հասկացե՛ք, որ արյունը ջուր չի դառնա

Ու չքանա,
Այն կնիք է հայի սրտին,
Գարնան չքնաղ վառ ծաղկունքին…
Խոսե՛ք, սարե՛ր, լեզո՛ւ առեք,
Համախմբե՛ք ազգը Հայկի,
Որ հետ բերենք չքնաղ Անիս,
Որ վերջապես մենք չամաչենք արտասանել.
-Հանգիստ ննջե՛ք, անմե՛ղ զոհեր,
Դատաստանի ժամին ահեղ
Հայն է հաղթել ու վճիռը արդար կնքել…

27.02.2018 թ.

*

* *

Մի հսկա, ճերմակ, թռչնակ է անվերջ հեռվում պտտվում,
Կապույտ երկինքն է կարծես թե չափում,
Կամ էլ տիեզերքն է ճեղքել նա փորձում։
Նա թևերը մեծ, շատ լայն տարածել
իջնում է ներքև,
Երկաթե պոչն է զարկում ասֆալտին,
Ու նկատվում է դատարկ սրահում
Դաժան լռություն…
Նա կրկին անգամ անհայ է եկել,
Բայց փոխարենը ետ դարձի պահին
Նա շատ շատերին առհավետ կառնի,
Ու մեր մայր հողից հեռու կտանի։
Դու զարմանահրաշ թռչնակ ես, գիտե՞ս,
Որ կտուց չունես, ոչ էլ մագիլներ,
Բայց որ բզկտել հայի բաց վերքեր,
Դու կարող ես հեշտ…

Ամեն անգամ, երբ տանում ես քաջեր, նաև՝ հանճարներ,
Մեծ բանաստեղծներ, հայտնի երգիչներ,
Դու հայրենասեր, գիտուն հայերին
Բռնել ես տալիս ճամփան փախուստի՝
Սովից, զրկանքից, կորստից հեռու,
Լավ կյանքի գովքն ես անդադար երգում,
Պանդուխտ ես դարձնում անգամ այն մարդուն,
Ով երեկ կանգնել, երդում էր տալիս,
Որ նա հող կուտի, բայց հող չի լքի։
Դու շատ դաժան ես, անսիրտ, անհոգի,
Որ քո թռիչքով մարել ես տալիս
Բազում հայերի լույսը օջախի,
Փակել ես տալիս դռները այն տան,
Ուր նա ապրել է երջանիկ անցյալ։
Դու գրավում ես, հմայում մարդկանց,
Առնում քո թևին ու տանում անդարձ։
Ես քեզ ատելու մի պատճառ ունեմ.
Քո ճամփան արդեն երկա՛ր տարիներ
Միակողմանի թռիչք է դարձել,
Տանում ես, տանում հարյուր հազարի,
Հայերին հասցնում օտարի շեմին,
Ու մոռանում ես, որ թռիչքը քո երկու կողմ ունի՝
Տարած հայորդուն պետք է ետ բերես, ուր էլ նա լինի...

27.10.2018 թ.

*

* *

Ամեն անգամ, երբ սեղան եմ նստում,
Մորս ձեռքերով պատրաստված հացի
Բույրն եմ ես առնում,

Աշխարհը կարծես շատ փոքր է դառնում,
Ու ամփոփվում է հորս օջախում,
Սիրո, բարության օրրանում անգամ
Չոր հացն է թվում շահին էլ արժան։
Մորս ջերմ սիրով եփված մուրաբան
Այնքա՛ն քաղցր է, որ մեղուն էլ անգամ
Ծաղկոտ դաշտերից այդպիսի մեղր
Չի կարող բերել։
Իսկ հորս արդար ձեռքերով սարքված
Մաճառի բույրից ո՞նց չխենթանաս,
Գույնն էլ վառ կարմիր արյունի նման,
Որ ծառայում է զուտ նրա համար,
Որ հաղթած հայի կենացը խմենք,
Ու փառք տանք նրա խելքին ու մտքին,
Ինչու չէ նաև բազուկի ուժին։
Այս համ ու հոտում իմ մանկությունն է
Շատ վաղուց ապրում,
Որ տխուր պահիս որպես պատառիկ իմ հիշողության,
Գալիս կանգնում է ուղիղ իմ դիմաց,
Ու հույս է տալիս՝ ձախորդ օրերը
Ձմռան նման են, կուգան ու կերթան,
Սա դեռ վերջը չէ, կյանքն առջևում է։
Իմ ջերմ ու ուրախ թանկագի՛ն հուշեր,
Դուք ինձ չլքե՛ք, աղաչում եմ ձեզ,
Ձեր շնորհիվ եմ սիրտս պինդ պահում,
Երազաքներիս ընդառաջ գնում...

09.06.2014 թ.

*

* *

Խավար գիշեր է, սիրտս հիշել է
Անցած սերերս, որ չեն մոռացվել,
Նրանք եկել, շնչիս են կանգնել,
Անցյալի պարտքերն են կարծես վերհիշել։
Ախր հասկացե՛ք, ազնիվ եմ եղել,
Եթե սիրել եմ, անկեղծ ասել եմ,
Թե չեմ համակրել, հեռու եմ քաշվել։
Ես մի սիրտ ունեմ, ոչ թե մեկ հարյուր,
Որ կարողանամ բոլորին սիրել,
Ում ժպտում եմ ես հանդիպման պահին։
Դուք մի՛ նեղացեք, չքնա՛ղ օրիորդներ,
Սիրահարվել եմ գուցե շատերիդ,
Բայց միայն մեկին սիրել եմ ուժգին.
Ես վանդակել եմ նրան սրտիս մեջ,
Ու չեմ թողնելու՝ ինձ լքի երբեք։
Դուք մի՛ մտածեք, որ խաղ եմ արել,
Կամ էլ ձեզ ծաղրել,
Ախր հասկացե՛ք, ՆՐԱՆ եմ փնտրել,
Երկար սպասել ու լուռ անրջել։
Դուք գնահատեք իմ քայլը ազնիվ,
Որ չեմ տրորել նամուս ու պատիվ,
Այլ հասկացրել եմ, որ դուք էլ
Ձերին փնտրեցեք կրկին…
Չէ՞ որ մեկ սիրտը Աստված բաժանում,
Նոր է մեր երկիր նրան ուղարկում։
Երկար տարիներ երկու կեսերը
Իրար են փնտրում, ապա նոր գտնում,
Իրար միանում, անբաժան դառնում։
Այնպես որ ես չեմ իմ կեսին ընտրել,
Դա տեր Աստված է վաղուց որոշել,
Ու իր զորությամբ սերը մեր օրհնել…

30.04.2020 թ.

*

* *

Չարությունը ծնվում է միշտ տկարների հոգիներում,
Ովքեր կյանքում մի տեղ նստել, դատարկ խոսել,
Ու երկնքից մանանա են կարծես սպասել։
Նրանք նույնիսկ քայլ չեն արել,
Որ սայթաքեն՝ նորից կանգնեն, կրկին փորձեն։
Նրանք միայն քննադատել ընտիր գիտեն,
Սրան-նրան պիտակ կպցնել
Կամ էլ գետնին հրել գցել։
Ախր եղբա՛յր, քեզ ո՞վ խնդրեց գամվել տեղում,
Նայել սերիալ, լսել ռադիո,
Գնալ հավաք քաղաքական
Ու աշխատել չնչին գումար։
Ուղեղ կոչված փոքրիկ գանձից
Դու էլ ունես, մի՛ խնայիր, օգտագործի՛ր,
Որ քեզ կյանքում չստրկացնեն գաղափարի։
Արի մի բան պարզաբանենք,
Չարի դիմաց երբեք Աստված դուռ չի բացի,
Կվանդակի դատարկության մութ սենյակում,
Որ մինչ երկինք համբարձվելը՝ ապաշխարի, ներում խնդրի,
Ժանգը մաքրի սրտի խորքից։
Դու հասկացի՛ր, Աստված ինքն էլ չի ցանկանում,
Որ երկինքը՝ չարի մահով, կեղտով լցվի…

12.08.2018 թ.

*

* *

Ասում են, թե մենք մի ձեռքով ծափ չենք զարկի,
Ու արդյունքի, հետևաբար, չենք էլ հասնի,
Համաձայն չեմ այդ մտքերին,
Հակադարձեմ ձեր ասածին։
Պատերազմի բովով անցած
Ու տուն դարձած հերոսներին,
Որ դուք տեսնեք անձեռք, անոտք,
Բայց ժպիտը ջինջ դեմքերին,
Կհասկանաք, որ ծափ զարկել
Անհրաժեշտ է ոչ թե ձեռքով
Կամ օգնությամբ, այլ հայդուկի
Զորեղ ոգու տոկունությամբ։
Օրինակով դուք կտեսնեք,
Որ առանց ոտք վազել գիտեն քաջերը մեր։
Անգամ գիտեմ նման մեկին, որ առանց ոտք
Սարն է ելել ձմռան կեսին։
Մատաղ լինեմ ես ձեր հոգուն,
Որ ձեր ձեռք ու ոտքերն անգամ նվեր արիք
Այն սուրբ հողին,
Որ պիտ քայլեն ուրիշները,
Բոլոր նրանք, որ թաքնվել
Մկների պես ծակն են մտել,
Երբ թշնամին մորթ էր անում մեր սահմանին։
Իսկ ձեզ տղերք՝ Ադամ, Ռոբերտ...
Ու այլ քաջեր, մենք պարտք ենք դեռ
Ջահել կյանքեր,
Շատ զարուններ, սիրուն հարսներ,
Որ սև հագան, ծնկի եկան գերեզմանին,
Փոխարենը ճերմակ շորով՝ ձեզ թևանցուկ,
Աստծո տաճար այցի գային, սեր երդվեին,
Ու պսակի խորհուրդը լուռ տուն տանեին...

27.04.2020 թ.

*

* *

Մի մութ սենյակ, ջարդված սեղան,
Բութ ճռռոցով հին ճոճաթոռ,
Ու դարն ապրած կաշվե բազմոց։
Աղքատիկ է խուցը մարդու,
Ով իր հոգով ավելին է, քան
Չաղ փորով, լի գրպանով
Ճարպոտ անձինք, որ
Սուր աչքով՝ լի կապոցի
Մեծ փողերը հաշվել գիտեն։
Այդ խեղճ մարդու լուռ սենյակում
Զուտ հուշերն են անվերջ խոսում,
Նրանք որպես վառ ճրագներ՝
Խավարն ասես ճեղքել կուզեն
Ու հիվանդոտ այդ մարդուկի հոգին լցնել։
Այդ մարդը միշտ մաքառել է, նորից փորձել,
Հույսով լցվել, անվերջ պայքար մղել ահեղ,
Որովհետև Աստծո խոսքով
Հոգին պինդ է ու զորավոր։
Նա լավ գիտի, որ գնալիս
Ոչ ոք ձեռքում փող չի տանում,
Ոչ ադամանդ, ոչ էլ՝ ոսկի։
Մարդը մերկ է աշխարհ գալիս,
Ձեռնունայն էլ հետ է դառնում՝
Միայն անունն իր թողնելով,
Որ պիտ խոսի իր գործերից,
Ապրած-չապրած անցած կյանքից,

Ափսոսանքից, կիսատ թողած երազանքից...

25.05.2015 թ.

*

* *

Նստել եմ ես մութ սենյակում,
Զրուցում եմ իմ ԵՍ-ի հետ։
Մենք անկեղծ ենք՝ առանց դիմակ,
Առանց քծնանք, առանց կաշառք,
Առանց իզուր շատ բարդ գործի
Միավորներ վաստակելու։
Հարց ենք տալիս մեկս մեկի,
Մտորում ենք երկար ու լուռ,
Հետո միայն պատասխանում։
Պարզվում է, որ միտքս պարզ է,
Հոգիս տոկուն ու պայքարող,
Այն ձևական ընկերներին, ծանոթներին,
Կաշառք սիրող հաստ վզներին
Ոչ թե հարգել, այլ զուտ տանել
Ու հանդուրժել չի էլ կարող։
Անկեղծության ահեղ ժամին
Անտարբեր եմ նաև դառնում
Դատարկամիտ հանճարների
Ճոխ ճառերին, սին խոսքերին,
Սուտ հավատքին, դատարկ կոչի անպետք կանչին։
Ես ու խիղճս պարզ միտք ունենք՝
Առանց ավել զարդարանքի, մերկացնում ենք
Կյանքի գանձը, որ կոչվում է
Արդարություն՝ առանց ավել պաճուճանքի.
Չէ՞ որ արդար դատը միայն մերկություն է

Միշտ պահանջում՝ անգամ հմուտ դատավորից։
Բայց խիղճը իմ որսաց կրկին
Մեղավորիս խղճուկ հոգին,
Որ երբեմն, չուզելով իսկ,
Անընմբոստ է մնում կյանքում՝
Անարժանի, ինքնակոչի՝
Զզվանք ծնող մեծ գովազդին,
Բայց, գիտե՞ք ինչ, եկե՛ք հիշենք,
Որ այս կյանքում անպետքությունն են լոկ գովազդում,
Շուկա հանում, որ լավ ծախվի, թե չէ
Ով որ կյանքում կշիռ ունի՝ առանց ավել
Առուծախի, աշխարհում միշտ
Իր տեղն ունի, իր դերն ունի,
Հետո նաև առանց ջանքի հետք կթողնի,
Նոր կբռնի հաջորդ կյանքի՝ միկողմանի, անդարձ ուղին....

28.11.2019 թ.

*

* *

Կյանքում ես միշտ նախընտրում եմ
Մեղան նստել փողով աղքատ,
Բայց հոգով միշտ հարուստի հետ,
Ումից կքաղեմ ես կյանքի դասեր,
Մտքեր սիրուն ու խրատներ,
Նրանց գանձը, սրտում պահված,
Մտքի մեջ է արտացոլվում,
Երբ մարդկանց հետ գործ են բռնում,
Կամ էլ ժամով զրույց անում։
Նրանց՝ կյանքում մեծ հարգանքով,
Իմ գտածոն ես կկոչեմ,

Որ երկար պեղել, բայց նոր եմ գտել,
Ոչ բաց եմ թողել, ոչ էլ փորձել արհամարհել։
Կյանքում շատ բան սովորել եմ հենց նրանցից,
Ոչ թե սուտ-մուտ հարուստներից՝
Սատանային հոգին ծախած
Էժանագին մարդուկներից,
Ովքեր կյանքում սրբություններ
Ոչ ճանաչում, ոչ հարգում են։
Նրանց համար ջուր կդառնա
Անգամ արյունն այն սուրբ մարդկանց,
Ովքեր իրենց կյանք են տվել,
Հետո սնել ու փայփայել։
Աստծո գործը անքննելի,
Անվիճելի օրենք է սուրբ,
Որ թողնում է, որ աշխարհում
Ծնվեն մարդիկ տարաբնույթ։
Երկար օրեր ու տարիներ
Միտք եմ արել ու հասկացել,
Որ խորհուրդը նման կյանքի,
Ունի շատ պարզ բացատրություն՝
Թացը չորից տարբերելու,
Ուրիշ հնար էլ ո՞վ ունի։
Ախր կյանքում ամեն արժեք
Համեմատման իր նիշն ունի,
Որ օգնում է միշտ տարբերել
Լավը վատից ու չսխալվել
Դժվար պահին...

30.01.2019 թ.

*

* *

Ես ծնկի կգամ միայն քո առաջ,
Իմ կարո՛ղ Աստված։
Քեզ կմեծարեմ, կերկրպագեմ՝
Որպես արարչի սուրբ երկրի վրա,
Ցմահ գովք կանեմ, որ ինձ կյանք տվիր,
Հետո էլ ընծա՝ Հայաստան երկրին։
Շնորհակալ եմ, որ արև տեսա,
Նրա ջերմ շողով մի լավ տաքացա,
Քամուն բաշխեցի իղձերս անգին,
Որ նա տարածի գարնան դաշտերին։
Մի օր կծլեն իղձերս, մարդի՛կ,
Ապա կծաղկեն մայր հողիս վրա։
Ես ընկեր դարձա նաև աստղերին,
Որոնք երազել ինձ սովորեցրին։
Նրանց լույսի տակ՝ առաջին անգամ,
Ես կույս օրիորդից համբույրս առա,
Նրանք լուռ վկան դարձան իմ սիրո,
Հետո բաժանման հառաչը առան,
Ու սրտիս դարման փորձեցին դառնալ։
Ես հպարտ եմ, Տե՛ր, որ քո օրհնությամբ
Քնում եմ, զարթնում, ապրում եմ ուրախ։
Սուրբ հողն եմ առնում ես ափերիս մեջ,
Ու զգում նրա բույրը կենսատու,
Որ հոգիս լցնում, ուժեղ է դարձնում։
Ապա նայում եմ կանգուն լեռներին
Ու հասկանում եմ, որ ես էլ նրանց պես
Հզոր, անսասան, ինչու չէ՝ հպարտ, կուզեմ, որ լինեմ,
Ու երբեք կյանքում հողին հավասար մեկը չլինեմ։

Ապա քայլում եմ պաղ առվի կողքով,
Հոգուս ճշմարիտ արտացոլանքը
Որսալու հույսով,
Որ անկեղծ լինեմ գոնե ես ինձ հետ, հետո՝ աշխարհի։
Հրաշք է կյանքը, իսկ բնությունը՝ չքնաղ ավելի։
Շնորհակալ եմ քեզ, ո՜վ ԱՐԱՐՉԱԳՈ՛ՐԾ,
Բոլոր հիասքանչ արևածագերն ու մայրամուտները տեսնելու համար, նաև՝ ապրելու։
Ես լիաթոք եմ օրը իմ ապրում,
Որ բան հասկանամ այն ակնթարթից,
Որ կյանք է կոչվում...

26.08.2018 թ.

*

* *

Աղջիկն ու տղան՝ իրար ձեռք բռնած,
Քայլում են դանդաղ փողոցով տխուր,
Կարծես անհաղորդ աշխարհի ցավին՝
Նրանք կորչում են ամբոխի միջին։
Աշունն է արդեն տերը աշխարհի,
Որ հասցրեց փոխել ընթացքը կյանքի։
Քաղաքն է պատվել գորշ ամպակույտով,
Թմբիրի մեջ է ամեն շնչավոր։
Շուրջը լռություն. միայն կայծակն է
Որոտում հեռվում, ու շանթահարում
Երկինքը՝ պատած դաժան տրտմություն։
Երկինքը կարծես ցասումն ունի իր,
Որ պետք է թափի այն մեկի գլխին,
Ով հեռացել է սուրբ արժեքներից։
Քայլերը հասցրին կամրջի եզրին,
Ուր ծփում էր լուռ ջուրն Աղստևի։

Այս անգամ արդեն վերջին զբոսանք,
Վերջին ծաղկեփունջ ու մնաս բարով։
Այս կյանքում, մարդի՛կ, կան բաժանումներ,
Որ անհրաժեշտ են անհապաղ անել։
Անփորձի ձեռքում չքնաղ վարդն անգամ
Անպետք կթվա, կթոշնի մի օր ու կվերանա։
Ճիշտը կլինի, որ ամեն ծաղիկ՝ իրեն խնամող,
Իրեն պահպանող այգեպան գտնի։
Կյանքում ես երբեք ձեռք չեմ տա վարդին,
Որին չեմ կարող փայփայել առմիշտ։
Ազնիվ կլինեմ ես բոլորիդ հետ,
Ես էլ քույր ունեմ, չքնա՛ղ օրիորդներ,
Ու չեմ ցանկանա անփորձի ձեռքում
Նրան ես տեսնել օրերից մի օր։
Եկե՛ք, դուք հարգեք ընտրությունը իմ,
Ու ձեր անունը պահպանեք անբիծ։
Ես նախընտրում եմ ցավոտ բաժանում,
Ոչ թե ցավալի, տանջող միություն։

30.11.2017 թ.

*

* *

Խավար գիշեր է, սիրտս հիշել է
Անցած սերերս, որ չեն մոռացվել,
Նրանք եկել, շնչիս են կանգնել,
Անցյալի պարտքերն են կարծես վերհիշել։
Ախր հասկացե՛ք, ազնիվ եմ եղել,
Եթե սիրել եմ, անկեղծ ասել եմ,
Թե չեմ համակրել, հեռու եմ քաշվել։
Ես մի սիրտ ունեմ, ոչ թե մեկ հարյուր,

Որ կարողանամ բոլորին սիրել,
Ում ժպտում եմ ես հանդիպման պահին։
Դուք մի՛ նեղացեք, չքնա՛ղ օրիորդներ,
Սիրահարվել եմ գուցե շատերիդ,
Բայց միայն մեկին սիրել եմ ուժգին.
Ես վանդակել եմ նրան սրտիս մեջ,
Ու չեմ թողնելու՝ ինձ լքի երբեք։
Դուք մի՛ մտածեք, որ խաղ եմ արել,
Կամ էլ ձեզ ծաղրել,
Ախր հասկացե՜ք, ՆՐԱՆ եմ փնտրել,
Երկար սպասել ու լուռ անրջել։
Դուք գնահատեք իմ քայլը ազնիվ,
Որ չեմ տրորել նամուս ու պատիվ,
Այլ հասկացրել եմ, որ դուք էլ
Ձերին փնտրեցեք կրկին…
Չէ՞ որ մեկ սիրտը Աստված բաժանում,
Նոր է մեր երկիր նրան ուղարկում։
Երկար տարիներ երկու կեսերը
Իրար են փնտրում, ապա նոր գտնում,
Իրար միանում, անբաժան դառնում։
Այնպես որ ես չեմ իմ կեսին ընտրել,
Դա տեր Աստված է վաղուց որոշել,
Ու իր զորությամբ սերը մեր օրհնել…

30.04.2020 թ.

*

* *

Չարությունը ծնվում է միշտ տկարների հոգիներում,
Ովքեր կյանքում մի տեղ նստել, դատարկ խոսել,
Ու երկնքից մանանա են կարծես սպասել։
Նրանք նույնիսկ քայլ չեն արել,

Որ սայթաքեն՝ նորից կանգնեն, կրկին փորձեն։
Նրանք միայն քննադատել ընտիր գիտեն,
Սրան-նրան պիտակ կպցնել
Կամ էլ գետնին հրել գցել։
Ախր եղբա՛յր, քեզ ո՞վ խնդրեց գամվել տեղում,
Նայել սերիալ, լսել ռադիո,
Գնալ հավաք քաղաքական
Ու աշխատել չնչին գումար։
Ուղեղ կոչված փոքրիկ գանձից
Դու էլ ունես, մի՛ խնայիր, օգտագործի՛ր,
Որ քեզ կյանքում չստրկացնեն գաղափարի։
Արի մի բան պարզաբանենք,
Չարի դիմաց երբեք Աստված դուռ չի բացի,
Կվանդակի դատարկության մութ սենյակում,
Որ մինչ երկինք համբարձվելը՝ ապաշխարի, ներում խնդրի,
Ժանգը մաքրի սրտի խորքից։
Դու հասկացի՛ր, Աստված ինքն էլ չի ցանկանում,
Որ երկինքը՝ չարի մահով, կեղտով լցվի …

12.08.2018 թ.

*

* *

Ասում են, թե մենք մի ձեռքով ծափ չենք զարկի,
Ու արդյունքի, հետևաբար, չենք էլ հասնի,
Համաձայն չեմ այդ մտքերին,
Հակադարձեմ ձեր ասածին։
Պատերազմի բովով անցած
Ու տուն դարձած հերոսներին,
Որ դուք տեսնեք անձեռք, անոտք,
Բայց ժպիտը ջինջ դեմքերին,

Կհասկանաք, որ ծափ զարկել
Անհրաժեշտ է ոչ թե ձեռքով
Կամ օգնությամբ, այլ հայդուկի
Զորեղ ոգու տոկունությամբ։
Օրինակով դուք կտեսնեք,
Որ առանց ոտք վազել գիտեն քաջերը մեր։
Անգամ գիտեմ նման մեկին, որ առանց ոտք
Սարն է ելել ձմռան կեսին։
Մատաղ լինեմ ես ձեր հոգուն,
Որ ձեր ձեռք ու ոտքերն անգամ նվեր արիք
Այն սուրբ հողին,
Որ պիտ քայլեն ուրիշները,
Բոլոր նրանք, որ թաքնվել
Մկների պես ծակն են մտել,
Երբ թշնամին մորթ էր անում մեր սահմանին։
Իսկ ձեզ տղերք՝ Ադամ,Ռոբերտ,....
Ու այլ քաջեր, մենք պարտք ենք դեռ
Ջահել կյանքեր,
Շատ գարուններ, սիրուն հարսներ,
Որ սև հագան, ծնկի եկան գերեզմանին,
Փոխարենը ճերմակ շորով՝ ձեզ թևանցուկ,
Աստծո տաճար այցի գային, սեր երդվեին,
Ու պսակի խորհուրդը լուռ տուն տանեին...

27.04.2020 թ.

*

* *

Մի մութ սենյակ, ջարդված սեղան,
Բութ ճռռոցով հին ճոճաթոռ,
Ու դարն ապրած կաշվե բազմոց։

Աղքատիկ է խուցը մարդու,
Ով իր հոգով ավելին է, քան
Չաղ փորով, լի գրպանով
Ճարպոտ անձինք, որ
Սուր աչքով՝ լի կապոցի
Մեծ փողերը հաշվել գիտեն։
Այդ խեղճ մարդու լուռ սենյակում
Զուտ հուշերն են անվերջ խոսում,
Նրանք որպես վառ ճրագներ՝
Խավարն ասես ճեղքել կուզեն
Ու հիվանդոտ այդ մարդուկի հոգին լցնել։
Այդ մարդը միշտ մաքառել է, նորից փորձել,
Հույսով լցվել, անվերջ պայքար մղել ահեղ,
Որովհետև Աստծո խոսքով
Հոգին պինդ է ու զորավոր։
Նա լավ գիտի, որ գնալիս
Ոչ ոք ձեռքում փող չի տանում,
Ոչ ադամանդ, ոչ էլ՝ ոսկի։
Մարդը մերկ է աշխարհ գալիս,
Ձեռնունայն էլ հետ է դառնում՝
Միայն անունն իր թողնելով,
Որ պիտ խոսի իր գործերից,
Ապրած-չապրած անցած կյանքից,
Ափսոսանքից, կիսատ թողած երազանքից...

25.05.2015 թ.

*

* *

Նստել եմ ես մութ սենյակում,
Զրուցում եմ իմ ԵՍ-ի հետ։

Մենք անկեղծ ենք՝ առանց դիմակ,
Առանց քծնանք, առանց կաշառք,
Առանց իզուր շատ բարդ գործի
Միավորներ վաստակելու։
Հարց ենք տալիս մեկս մեկի,
Մտորում ենք երկար ու լուռ,
Հետո միայն պատասխանում։
Պարզվում է, որ միտքս պարզ է,
Հոգիս տոկուն ու պայքարող,
Այն ձևական ընկերներին, ծանոթներին,
Կաշառք սիրող հաստ վզներին
Ոչ թե հարգել, այլ զուտ տանել
Ու հանդուրժել չի էլ կարող։
Անկեղծության ահեղ ժամին
Անտարբեր եմ նաև դառնում
Դատարկամիտ հանճարների
Ճոխ ճառերին, սին խոսքերին,
Սուտ հավատքին, դատարկ կոչի անպետք կանչին։
Ես ու խիղճս պարզ միտք ունենք՝
Առանց ավել զարդարանքի, մերկացնում ենք
Կյանքի գանձը, որ կոչվում է
Արդարություն՝ առանց ավել պաճուճանքի.
Չէ՞ որ արդար դատը միայն մերկություն է
Միշտ պահանջում՝ անգամ հմուտ դատավորից։
Բայց խիղճը իմ որսաց կրկին
Մեղավորիս խղճուկ հոգին,
Որ երբեմն, չուզելով իսկ,
Անընմբոստ է մնում կյանքում՝
Անարժանի, ինքնակոչի՝
Զզվանք ծնող մեծ գովազդին,
Բայց, գիտե՞ք ինչ, եկե՛ք հիշենք,

Որ այս կյանքում անպետքությունն են լոկ գովազդում,
Շուկա հանում, որ լավ ծախվի, թե չէ
Ով որ կյանքում կշիռ ունի՝ առանց ավել
Առուծախի, աշխարհում միշտ
Իր տեղն ունի, իր դերն ունի,
Հետո նաև առանց ջանքի հետք կթողնի,
Նոր կբռնի հաջորդ կյանքի՝ միկողմանի, անդարձ ուղին....

28.11.2019 թ.

*

* *

Կյանքում ես միշտ նախընտրում եմ
Սեղան նստել փողով աղքատ,
Բայց հոգով միշտ հարուստի հետ,
Ումից կքաղեմ ես կյանքի դասեր,
Մտքեր սիրուն ու խրատներ,
Նրանց գանձը, սրտում պահված,
Մտքի մեջ է արտացոլվում,
Երբ մարդկանց հետ գործ են բռնում,
Կամ էլ ժամով զրույց անում։
Նրանց՝ կյանքում մեծ հարգանքով,
Իմ գտածոն ես կկոչեմ,
Որ երկար պեղել, բայց նոր եմ գտել,
Ոչ բաց եմ թողել, ոչ էլ փորձել արհամարհել։
Կյանքում շատ բան սովորել եմ հենց նրանցից,
Ոչ թե սուտ-մուտ հարուստներից՝
Սատանային հոգին ծախած
Էժանագին մարդուկներից,
Ովքեր կյանքում սրբություններ
Ոչ ճանաչում, ոչ հարգում են։

Նրանց համար ջուր կդառնա
Անգամ արյունն այն սուրբ մարդկանց,
Ովքեր իրենց կյանք են տվել,
Հետո սնել ու փայփայել։
Աստծո գործը անքննելի,
Անվիճելի օրենք է սուրբ,
Որ թողնում է, որ աշխարհում
Ծնվեն մարդիկ տարաբնույթ։
Երկար օրեր ու տարիներ
Միտք եմ արել ու հասկացել,
Որ խորհուրդը նման կյանքի,
Ունի շատ պարզ բացատրություն՝
Թացը չորից տարբերելու,
Ուրիշ հնար էլ ո՞վ ունի։
Ախր կյանքում ամեն արժեք
Համեմատման իր նիշն ունի,
Որ օգնում է միշտ տարբերել
Լավը վատից ու չսխալվել
Դժվար պահին...

30.01.2019 թ.

*

* *

Ես ծնկի կգամ միայն քո առաջ,
Իմ կարո՛ղ Աստված։
Քեզ կմեծարեմ, կերկրպագեմ՝
Որպես արարչի սուրբ երկրի վրա,
Ցմահ գովք կանեմ, որ ինձ կյանք տվիր,
Հետո էլ ընծա՝ Հայաստան երկրին։

Շնորհակալ եմ, որ արև տեսա,
Նրա ջերմ շողով մի լավ տաքացա,
Քամուն բաշխեցի իղձերս անգին,
Որ նա տարածի գարնան դաշտերին։
Մի օր կծլեն իղձերս, մարդի՛կ,
Ապա կծաղկեն մայր հողիս վրա։
Ես ընկեր դարձա նաև աստղերին,
Որոնք երազել ինձ սովորեցրին։
Նրանց լույսի տակ՝ առաջին անգամ,
Ես կույս օրիորդից համբույրս առա,
Նրանք լուռ վկան դարձան իմ սիրո,
Հետո բաժանման հառաչը առան,
Ու սրտիս դարման փորձեցին դառնալ։
Ես հպարտ եմ, Տե՛ր, որ քո օրհնությամբ
Քնում եմ, զարթնում, ապրում եմ ուրախ։
Սուրբ հողն եմ առնում ես ափերիս մեջ,
Ու զգում նրա բույրը կենսատու,
Որ հոգիս լցնում, ուժեղ է դարձնում։
Ապա նայում եմ կանգուն լեռներին
Ու հասկանում եմ, որ ես էլ նրանց պես
Հզոր, անսասան, ինչու չէ՝ հպարտ, կուզեմ, որ լինեմ,
Ու երբեք կյանքում հողին հավասար մեկը չլինեմ։
Ապա քայլում եմ պաղ առվի կողքով,
Հոգուս ճշմարիտ արտացոլանքը
Որսալու հույսով,
Որ անկեղծ լինեմ գոնե ես ինձ հետ, հետո՝ աշխարհի։
Հրաշք է կյանքը, իսկ բնությունը՝ չքնաղ ավելի։
Շնորհակալ եմ քեզ, ո՜վ ԱՐԱՐՉԱԳՈ՛ՐԾ,
Բոլոր հիասքանչ արևածագերն ու մայրամուտները տեսնելու համար, նաև՝ ապրելու։
Ես լիաթոք եմ օրը իմ ապրում,
Որ բան հասկանամ այն ակնթարթից,

Որ կյանք է կոչվում...

26.08.2018 թ.

*

* *

Աղջիկն ու տղան՝ իրար ձեռք բռնած,
Քայլում են դանդաղ փողոցով տխուր,
Կարծես անհաղորդ աշխարհի ցավին՝
Նրանք կորչում են ամբոխի միջին։
Աշունն է արդեն տերը աշխարհի,
Որ հասցրեց փոխել ընթացքը կյանքի։
Քաղաքն է պատվել գորշ ամպակույտով,
Թմբիրի մեջ է ամեն շնչավոր։
Շուրջը լռություն. միայն կայծակն է
Որոտում հեռվում, ու շանթահարում
Երկինքը՝ պատած դաժան տրտմություն։
Երկինքը կարծես ցասումն ունի իր,
Որ պետք է թափի այն մեկի գլխին,
Ով հեռացել է սուրբ արժեքներից։
Քայլերը հասցրին կամրջի եզրին,
Ուր ծփում էր լուռ ջուրն Աղստևի։
Այս անգամ արդեն վերջին զբոսանք,
Վերջին ծաղկեփունջ ու մնաս բարով։
Այս կյանքում, մարդի՛կ, կան բաժանումներ,
Որ անհրաժեշտ են անհապաղ անել։
Անփորձի ձեռքում չքնաղ վարդն անգամ
Անպետք կթվա, կթոշնի մի օր ու կվերանա։
Ճիշտը կլինի, որ ամեն ծաղիկ՝ իրեն խնամող,
Իրեն պահպանող այգեպան գտնի։
Կյանքում ես երբեք ձեռք չեմ տա վարդին,

Որին չեմ կարող փայփայել առմիշտ։
Ազնիվ կլինեմ ես բոլորիդ հետ,
Ես էլ քույր ունեմ, չքնա՛ղ օրիորդներ,
Ու չեմ ցանկանա անփորձի ձեռքում
Նրան ես տեսնել օրերից մի օր։
Եկե՛ք, դուք հարգեք ընտրությունը իմ,
Ու ձեր անունը պահպանեք անբիծ։
Ես նախընտրում եմ ցավոտ բաժանում,
Ոչ թե ցավալի, տանջող միություն։

30.11.2017 թ.

*

* *

Հե՛յ դո՛ւ, քարավա՛ն,
Որտե՞ղ սլացար,
Հուշերս տարար։
Ես քեզ եմ փնտրում,
Անվերջ որոնում
Բոլոր վայրերում։
Բայց այս ամայի,
Չոր անապատում
Լոկ ուժգին քամին է
Անդադար սուրում։
Նա օդ է հանում
Երազանքներիս
Դղյակն ավազե։
Ե՞րբ դու գնացիր,
Եվ արդյոք ինչո՞ւ։
Չէ՞ որ առանց հուշ
Կյանքս ես նորից

Պիտի սկսեմ։
Կիզիչ արևի
Շողերի ներքո
Ես կարծես լինեմ
Խղճուկ, մի անտես
Թափառաշրջիկ,
Որ որոնում է
Անցյալը հեռվում։
Տե՛ր, լսի՛ր աղոթքը հոգուս.
Ես անզոր դարձա
Այս հիմար գործում.
Չէ՞ որ անցյալը
Ապրել եմ վաղուց
Ու ճանապարհել
Իմ հոժար կամքով։
Դու սթա՛փ պահիր
Միտքս այսուհետ,
Որ ես չկորցնեմ
Պահը ապրելուս։
Ես դեռ չգիտեմ,
Որքան դեռ կապրեմ,
Որ մեկ էլ նստեմ
Անցյալ փորփրեմ։
Տե՛ր, սովորեցրո՛ւ,
Որ ես գոհանամ
Ապրած-արածով,
Ոչ թե որոնեմ
Անցյալ սլացող
Քարավանը իմ...

28.09.2015 թ.

*

* *

Ես այս աշխարհում փնտրում եմ մեկին,
Ով կհասկանա տառապանքը իմ,
Ով կզրուցի ու լուռ կլսի բողոքս կյանքի...
Մեր շրջապատում կան մարդիկ բազում,
Որ խոսում են միշտ, սակայն չեն լսում։
Նրանք դասեր են կյանքի մեզ տալիս
Ու չեն էլ հոգնում այդ դժվար գործից։
Նրանք ծնվել են լո՛կ նրա համար,
Որ մատնանշեն բացերը մարդկանց։
Ա՜խր հասկացե՛ք, խելո՛ք ընկերներ,
Մեզ միայն պետք է զրույցի ընկեր,
Ով գոնե փորձի հոգին մեր բանալ,
Մեր սրտի ցավը գուցե հասկանալ։
Ես ուզում եմ, որ մեկն ինձ լսի,
Լուռ, անխոս նստի, մի քիչ համբերի,
Մինչև ավարտեմ մտքերս խրթին։
Հույզերիս ծովում՝ փոթորկուն, ուժգին,
Ես հանդիպել եմ ուզում մակույկի,
Որ նա ինձ հանի դաժան ցասումից,
Անգութ ալիքի հուժկու հարվածից
Փորձի պաշտպանել ու ցամաք հանի։
Որքան տխուր է մեր կյանքը, անմիտ,
Որ մեզ հասկանալ չեն փորձում մարդիկ...
Ամբողջ աշխարհում, մի՞թե ամենքիս
Մի լսող ականջ, հարազատ հոգի
Բաժին չի հանում Տերը վերևից։
Հազար երանի բոլոր-բոլորին,
Որ ունեն մեկին, որ ճիշտ պահերին

Իրենց կգտնի, անվերջ կլսի ու չի կշտամբի...

28.05.2014 թ.

*

* *

Բարևս առար ու լուռ հեռացար,
Մի՞թե այլևս չենք տեսնի իրար,
Մի՞թե այլևս քո քաղցր ձայնով
Անունս չես տա։
Ասում են՝ երբեք, և ոչ մի մարդու
Զուր չենք հանդիպում ու մեր կյանք թողնում։
Նրանք գալիս են զուտ նրա համար,
Որ նոր գույն բերեն ու նոր հեռանան։
Մեկը իր սերն է մեզ նվեր բերում,
Մեկն էլ մեր սիրտն է առնում ու տանում։
Հիմա. ի՛մ չքնաղ, նու՛րբ գեղեցկուհի,
Դու սե՞ր ես բերել, թե՞ սերս կառնես ու կանէանաս,
Ու ինձ կթողնես հավերժ շվարած։
Ես էլ խենթի պես քեզ կորոնեմ,
Ե՛վ այգաբացին, և՛ մայրամուտին,
Նաև գիշերը՝ մթին, խավարին,
Երբ փարոսը իմ աստղերն են միայն,
Որ ուղղորդում են ամեն օր ու ժամ։
Ես վախենում եմ ոչ թե նրանից,
Որ սիրտս կաթ-կաթ կանես արնաքամ,
Այլ նրա համար, որ հրաշք տեսքիդ
Կարոտ կմնամ, դատարկ օրերս
Մի կերպ քարշ կտամ։
Դժվար է կյանքում ապրել առանց սեր,
Բայց և կրկնակի դաժան է, կասեն,

Երբ անպատասխան են զարկերը սրտիդ,
Երբ միևնույնն է ապրել-չապրելդ,
Ինչո՞ւ չէ, նաև անկեղծ սիրելդ։
Ես կարծում եմ, որ կյանքում ամեն հարց
Իր պատասխանը պիտի ունենա,
Եվ անհետք անցնել չի կարող անգամ
Միակողմանի սերը խեղճ մարդկանց։
Նրանք կծնվեն ուրիշ ժամանակ՝
Ուրիշ դարերում, այլ աշխարհներում,
Եվ իմ կարծիքով՝ նոր թափ կստանան.
Սերը մահ չունի կամ էլ թե ավարտ։
Ես համոզված եմ, հայուհի՛ իմ թանկ,
Որ իմ բաժինն ես Աստծով որոշված...

30.05.2017 թ.

*

* *

Խնկարկում եմ ես՝ անունդ տալով,
Աղոթք անելով ու քեզ հիշելով...
Քո ջերմ ծիծաղը դեռ արձագանք է
Տալիս ականջիս,
Սիրուն ժպիտդ չի էլ չքանում աչքիս առաջից։
Այնքան անսովոր բաժանում էր սա,
Որ դու հեռացար ու հետ չես դառնա։
Ես կարծում եմ, որ հավերժ դու կապրես,
Հավերժ կլինես թեկուզև հեռվում՝
Չքնաղ երկնքի կապույտ լազուրում։
Ես չեմ ընդունում երեք տառերի
Շփոթը, մարդի՛կ, որ մահ է կոչվում։
Դրա մեջ հաստատ նորի սկիզբն է

Ապրում, ապրեցնում
Բոլոր-բոլորին, որ գնում են վեր՝
Դեպի պարզ երկինք։
Ես չեմ հավատում կյանքի ավարտին,
Ես համոզված եմ, որ բոլոր մարդիկ
Նոր կյանք կստանան հարության պահին,
Կվերածնվեն կրկին ու կրկին...

25.07.2020թ.

*

* *

Խեղճ են մտքերը հայի զավակի,
Ով մտածում է, որ պայքարը իր
Անարդյունք կանցնի,
Եվ որ իր կողքին ոչ ոք չի կանգնի,
Ձեռքը չի բռնի ու չի սատարի,
Եվ որ իր համար դեռ դարեր առաջ
Արևն է խամրել ու արնաներկ է
Աշխարհը դարձել։
Եթե օտարի դուք ձեռքին նայեք,
Ուրեմն հավետ մի բան լավ հիշեք՝
Հավերժ հպատակ նրան կլինեք։
Դուք նրա կոչով, նաև ցուցումով
Ձեր կյանքը կապրեք
Ու զուրկ կլինեք դուք իրավունքից,
Որ Աստված ինքն է մեզ պարգև
Անում ծնվելու պահին։
Ձեզ թույլ չեն տալու ինքնուրույն ընտրել,
Եվ նաև կյանքում ազատ մարդ կոչվել։
Ինքնակամորեն ձեզ մի՛ դարձրեք ստրուկ,

Ձեռքի խաղալիք, խելոք խամաճիկ,
Որ որպես գործիք օտարի շահին
Պիտի ծառայի։
Հայը հաղթող է, եթե իր միջից
Հանում է որդը ճիշտ ժամանակին.
Այն դավաճանին, ով որ իր շահին
Երկրորդել գիտի հայրենիք, պատիվ։
Հայը հաղթող է, եթե մի աչքը արթուն է պահում,
Զենքն էլ իր ձեռքին պատրաստ սպասում։
Թուրքը ձեզ համար Դավիթ չի Սասնա,
Որ կոչն իր անի, խավար գիշերն էլ
Մի հատ լուսացնի,
Հետո մենամարտ ձեզ հետ սկսի։
Ա՛խր հասկացե՛ք, հաղթողի ոգին
Չի կարող լինել այդքան թույլ ու սին,
Որ միշտ ընկրկի ընտրության պահին,
Առավել ևս՝ նահանջել փորձի հերոսի կողքին,
Ու նրան շեղի իր բռնած գործից...

21.09.2013 թ.

*

* *

Ասում եք՝ անմահներ չկա՞ն։
Նրանք կան հեռվում՝ ուրիշ աշխարհում՝
Անդարձ ճամփեքում, անհաս երկնքում։
Նրանք ձեր քունն են անվերջ պահպանում,
Անդորրը հսկում, հողը պաշտպանում։
Նրանք տիտաններ կարծես թե լինեն,
Որ մեր անցյալի անիվը անգամ
Հետ կպտտեն ու հատուցումը նաև պահանջեն։

Հե՜յ դո՛ւք՝ թշվառնե՛ր, անխե՛լք ապրողներ,
Կարծում եք նրանք զոհվե՞լ են, չքվե՞լ։
Ես խղճո՜ւմ եմ ձեզ, անմի՛տ մարդուկներ,
Նրանց շունչն անգամ կենդանի է դեռ,
Քան ձեզ պես ապրող շատերը հիմա...
Նրանց հոգին մի՜շտ անտես կմնա,
Բայց գործը՝ խոսուն, հավերժ, հավիտյան...
Նրանք են հաստատ տերը երկնքի,
Ու հովանավորը քառս մեր երկրի...
Դուք գոնե գիտե՞ք, որ այդ քաջերին՝
Փոքր ու ոչ մարմնեղ, հսկա մայրեր են
Լույս աշխարհ բերել՝
Եղնիկի պես հեզ, ոգին՝ առյուծի՝ հզոր, անսասան,
Որ կյանք են տվել այնպիսիններին,
Ովքեր միշտ, անշուշտ, ծառա կլինեն
Հայի սուրբ հողին։
Անմահներ չկա՞ն...
Կան ու ապրում են հենց ձեր տան կողքին,
Նույն բակի միջին կամ էլ փողոցի...
Հաճախում ձեզ հետ դպրոց կամ էլ բուհ,
Աշխատում գուցե նույն գործարանում կամ սրճարանում։
Մի՞թե չգիտեք, որ անմահները
Անտե՜ս են լինում, չէ՞ որ նրանց մեջ
Գոռոզության տեղ համեստ հայորդու
Ոգին է ապրում։
Անմահներ չկա՞ն...
Ծիծաղելի է. եղե՜լ են, կա՜ն ու դեռ կլինե՜ն,
Քանի հրեշը դեռ չի գլխատվել…

09.05.2016 թ.

*

* *

Մա՛յրս, պաշտելի՛ս, այնպես եմ ուզում
Հեքիաթիդ թևով անցյալ հետ դառնալ,
Ուր դարդ ու ցավեր սրտումս չկար,
Ուր ինձ տանջում էր լո՛կ վատ երազս
Կամ էլ ծնկներիս փոքրիկ վերքերի
Այդքա՜ն ծակծկող ցավն ու մրմուռը,
Երբ լվանում ու համբուրում էիր,
Ցավն էլ չքանում, լացս փոխվում էր
Անզուսպ ծիծաղի։
Երազանքս՝ լո՛կ դառնալ արժանի
Զավակը մեր տան, քեզ ու հորը իմ՝ հենարան, պաշտպան։
Այնպես եմ ուզում անհոգ օրերն իմ,
Երբ գլուխը իմ բարձին դնելիս
Չէի մտածում գործերիս մասին,
Նրանք, որ կիսատ, թերի մնացին...
Քունը շատ արագ իր գի՜րկն էր առնում,
Երազի թևով շա՜տ հեռու տանում։
Ես հեծնում էի հրեղեն ձիեր,
Ու նրանց վազքով սլանում վերև,
Աստղերին հասնում ու շուրջպար բռնում։
Ես ողջ տիեզերքն էի ոտնատակ անում,
Ու իմ երջանիկ հրաշքը փնտրում։
Ապա մտովի լայնարձակ դաշտում
Քո սիրած ծաղկից փունջ էի կապում,
Ու թևավորված՝ հզոր թռչնի պես,
Գիրկդ էի վազում։
Մա՛մ, ինչո՞ւ չեմ կարող հետ բերել
Այն հին օրերս անգին,

Երբ խնդիր բառը հանդիպում էր ինձ
Լոկ դասագրքում թվաբանության։
Ա՜խր, ես հիմա հասուն եմ դարձել,
Բայց, հասկանո՞ւմ ես, ժպիտս եմ կորցրել,
Այն խամրել է, տե՛ս, երբ բարդ օրերն են
Հայտնվել թղթին՝ պատին ամրացված իմ օրացույցին։
Տա՛ր ինձ, մանկությու՛ն,
Քո գիրկը կրկին ու ինձ պարուրի՛ր
Հուշերով անգին։
Ա՜խ ի՛մ մանկություն ու կյանք թանկագին,
Մի՞թե չեք տեսնում, որ ձեր սլացքը
Արագ է, ուժգին,
Բան չհասկացա իմ ապրած կյանքից...

30.10.2017 թ.

*

* *

Կյանքում ոչ բոլոր մարդկանց է տրված
Միասին լինել, ընտանիք կազմել, հարատև ապրել։
Կան նաև սերեր, որ երկկողմանի, բայց անհնարին կարող են լինել։
Դրա ուժը՝ մեծ, զորեղ ու անմար, կարծես հուշում է դրական ավարտ,
Բայց դե՛ չի ստացվում, կամ էլ մեր բախտն է այդպես որոշում։
Դրա ցավը բութ, չբուժվող հետքեր կթողնի սրտիդ, որ դու անդադար
Հիշես տանջող քեզ, կարծես քեզ սպանող, դաժան, տխուր միտք.
Սիրել կարող ես, բայց կողքիդ պահել դու ի զորու չես։
Մեր կյանքը ասես պարադոքս լինի՝
Կորցնել միշտ նրան, ով թանկ է, անգին,
Քեզ ապրեցնում է, պարուրում հոգիդ,
Իսկ, ա՛յ, մոլորյալ ստվերները սին
Գալիս են, դառնում քեզ հետ ուղեկից,

Իսկ հետո կարգում կյանքի կողակից։
Բարդ է հասկանալ օրենք ու կանոն,
Երբ սրտիդ վերքը միշտ բաց է մնում,
Անընդհատ տանջում, հոգեհան անում։
Մի՞թե դաժան չէ սիրո օրենքը,
Նրա վճարը, նաև՝ վախճանը...
Երբ երազում ես շատ մեծ ընտանիք,
Բայց վաստակում ես միայն սիրող կին։
Հասկացե՛ք, մարդի՛կ, սերեր կան կյանքում,
Որ, դեռ չսկսված, վախճան են ապրում,
Կիսատ են մնում, կյանքեր կործանում։
Բայց մի բան կասեմ.
Եթե նման սեր չլիներ կյանքում,
Էլ ո՞վ կգրեր «Արա Գեղեցիկ», «Սպանված աղավնի»,
Ինչո՞ւ չէ, նաև դժբախտ «Տիտանիկ»...

30.03.2018 թ.

*

* *

Ահեղ է ուժը հայի բազուկի,
Նրա սուր մտքի և սուրբ հավատքի։
Նրան օձի պես նախանձում է միշտ
Բութ, տկար, անմիտ ոսոխը մեր հին։
Եվ, երբ չեն կարող այլ տեղում հաղթել,
Քնած ժամանակ կուզեն գլխատել,
Որպեսզի հատ-հատ պակասեն
Բոլոր հայորդիները երկրի երեսից,
Ու մեր լեռներում մնան լոկ իրենք՝
Քոչվոր, վայրենի ցեղերը թուրքի։
Հասկանու՞մ եք դուք՝ աշխարհի ազգեր,

Անգամ, եթե ձեր ձեռքերն արնոտ չեն,
Դուք էլ նրանց հետ պիտի պատժվեք,
Երբ Աստված իր մեծ ցասումը թափի
Երկրի երեսին, ձեզ նման բոլոր
Անհավատ մարդկանց բութ գլուխներին,
Որ ականատեսն են շատ մեծ հանցանքի:
Ովքեր անհրաժեշտ պահին դառնում են
Խուլ, կույր, նաև անլեզու,
Ու չեն էլ գոռում ի լուր աշխարհի,
Որ ազգ են մորթում, անհայրենիք են
Հայերին թողնում:
Սիրտս ճեղքել է կուրծքն իմ ցանկանում,
Պոկվել իմ մարմնից, ապա դուրս թռչել,
Այլևս զարկել նա էլ չի ուզում,
Իմաստ չի գտնում այս զուր աշխարհում:
Ա՜խր, անարդար դատին աշխարհի
Սիրտն իմ չի կարող դիմադրել էլի:
Այն թուլացել է, դժվար է տանում
Խաղերն այս կյանքի,
Շահին ենթակա, դրամին գերի՝ թշվառ ազգերին:
Դուք մի մոռացեք խոսքերը անգին.
Ձեռնունայն եկանք, այդպես էլ գնում,
Դեպի երկինք ենք անդարձ սլանում:
Դժվար չէ հիշել միայն մի կանոն՝
Պատմության առաջ ոչ մի դատավոր,
Եվ ոչ մի պաշտպան
Ջորեղ չեն այնքան, որքան
Որ կուզեն հիմա երևալ:
Ժամանակը միշտ իր գործն է անում,
Ու արժան ձևով իր սև թանաքով
Սպիտակ էջին գրում է մի օր,

Թե ով էր տերը, և ով՝ հպատակ,
Ով էր ազնիվը, և ով՝ դահիճը,
Ով էր երազում ազգս գլխատել,
Երկրին իմ տիրել,
Բայց Աստծո կամոք կյանքի չկոչեց,
Ու մեզ չհաղթեց...

30.10.2016 թ.

*

* *

Թո՛ղ անխոնջ ուղին լինի գրավիչ,
Դու քո վեհ կոչման,վեհ նպատակին
Կա՛ց հավատարիմ, կա՛ց անշեղ երգիչ,
Թե՛ քո երգերում, թե գործի ժամին։

Եվ առաջ գնա-սուրբ ճշմարտության
Զորավոր կոչին հլու, հպատակ.
Անցի՛ր խոցոտիչ տատասկի ճամփան,
Առանց հուսալու դրախտ ու պսակ։

Եղի՛ր մարտնչող անվեհեր հոգով,
Պաշտպան մարդկային իրավունքների,
Մի՛ թող, որ դարիդ սև արատներով
Վարակվի հոգիդ և անարգ քնի։

Որպես շանթ երկնից, որպես հուր ու սուր,
Թո՛ղ հզոր լինի քո ուժն երգերում։
Թե մարե քո ձայնն ազնիվ ու մաքուր,
Երգդ չի մարի մարդկանց սրտերում...

*

* *

Հեռու ես դու,բայց ի՞նչ արած,
Առանց քեզ էլ մի կերպ կապրեմ,
Տուն կշինեմ ու ինձ արժան կին կգտնեմ,
Ով իր սիրով զորշ պատերին
Նոր գույն կտա,իսկ իմ կյանքին,
Տխուր սրտին՝ մեծ ջերմություն,
Որ ես ապրեմ երջանկություն....

27.09.2019թ

*

* *

Արևի հետ եմ այսօր ես զարթնել,
Որ ծաղիկներդ հասցնեմ ես փնջել,
Նրանց փշերը հատ-հատ ես պոկեմ,
Որ քո ձեռքերը հանկարծ չծակեն։
Սիրելի՛ մայրիկ,ամեն ծաղիկը
Սիրով եմ ընտրել ու իմ մաղթանքով
Նրանց պարուրել,որ քեզ փոխանցեմ
Հոգուս իղձերը ու իմ մեծ սերը,
Որ քեզ համար եմ սրտումս պահել։
Խառն են մտքերս,թերի՝ խոսքերս,
Բայց դու հասկացա՞ր՝
Թանկ ես,անգի՛նս...

2013թ

*

* *

Ասում են խոսքը թռչուն է կարծես,
Որ թռավ գնաց,չես բռնի հավետ։

Այդ միտքը հիմա կաշկանդում ինձ,
Ճնշում մտքերս,սաստում իմ լեզվին։
Ու չեմ հասկանում, ինչպե՞ս ես խոսեմ,
Ինչե՞ս ճիշտ ձևով խոսքերս կապեմ,
Որ կյանքում, մեկ սիրտ անգամ չջարդեմ,
Որ , գեթ մեկ հոգի սրախեղդ չանեմ,
Որ ես անիմաստ չդարձնեմ
Ոմանց գոյությունը խեղճ։
Լեզվի կապանքը դժվար է պահել,
Առավել ևս այն կառավարել ,
Չէ որ , գիտուն ենք մենք մեզ համարում,
Ու սրան-նրան անվերջ խրատում։
Եկեք հասկանանք,որ ամեն անհատ
Իր խելքը ունի գործելու համար....

Վերջի սկիզբը

Եթե մի օր խավարամած գիշերներում, ես որոնեմ աչքերը քո,
Ապա այդժամ դու իմացիր՝ անզոր դարձան սիրտս ու հոգիս։
Եթե մի օր արշալույսի մեղմ ցոլքերում,ես որոնեմ ժպիտը քո,
Ապա այդժամ դու գիտակցիր՝ գերին դարձա քո մեծ սիրո։
Ժամանակը իր մեղմ սահքով բզկտում է միտքս, հոգիս,
Բայց դու հեռու, հեռավոր ես ցավ ու վշտիս։
Գիտեմ, որ դու մեղավոր չես,իմ մենավոր հոգին էր,լո՛կ, սեր որոնում։
Իմ տանջալլուկ սիրտն էր փնտրում մի պտղունց աղ՝ բաց վերքերին։
Բայց ի՞նչ արած, կյանքը դարբնոց,ես շիկացած այրվող երկաթ, իսկ դու ցավոք անփորձ դարբին,
Որ երկաթի զնգուն ձայնից թև չի առնում, այլ իր վախից ու տագնապից դուրս է թռչում։
Բայց գիտե՞ս ինչ, էլ չեմ թախծում, էլ չեմ սպասում,

Չէ որ կյանքում մեկ դարբնոց չէ, ոչ էլ՝ դարբին։
Չէ որ կյանքում մեկ անկումից մարդ չի մեռնում,
Այլ բարձրանում, թափ է առնում ու վեր ճախրում։

*

* *

Արև, խնդրում եմ, շողա՛, տաքացրու՛,
Սիրտս ցավում է՝ յարս է հեռվում։
Նա հեռացել է ու մոռացել է,
Որ ինձ խոստացել էր հավերժ միություն։
Մրսում եմ,արև, ու տագնապ զգում,
Կարծես՝ օդը ինձ էլ չի հերիքում։
Ա՜խր,իմ չքնաղ,հրաշք գեղուհի,
Ինչու՞ լքեցիր քո ասլան յարին,
Ով քեզ սիրել է, բայց հիմա կատի,
Չէ որ իր սիրտը ոտնակոխ արիր։
Ով հիացել է քո չքնաղ դեմքով,
Բայց հիմա զզվում,նողկանք է ապրում։
Ով քեզ կարծել է անթև հրեշտակ,
Բայց հիմա դարձար դժոխքի զավակ,
Որ խժռեց նրա հոգին անապակ։
Օրեր, տարիներ մեզ կբաժանեն,
Բայց դու, իմ սրտում էլ տեղ չփնտրես,
Ես քեզ խամաճիկ չեմ լինի կյանքում,
Ու մեզ պինդ կապող թելերը բոլոր
Կտրում եմ,թափում,հետևում թողնում։
Դու գնա՛, փնտրի՛ր հերթական զոհիդ,
Ես էլ ինձ արժան՝ ապագա տան կին...

30.08.2017թ.

*

* *

Օձեր, կարիճներ վխտում են հողում,
Ուր մի ժամանակ քաջ հայն էր ապրում։
Նրանք խմում են ջուրն այն երկրի,
Որով ծարավն իր կոտրում էր մանչը,
Հոգնած հնձվորը, կամ էլ բանվորը,
Վարպետ Արտաշը՝ Վանի քարտաշը,
Գորգագործ հարսը, անվախ Աղասը,
Բոլոր-բոլորը՝ ում հայ են կոչում։
Զտարյուն հայ եմ՝ պատմություն սիրող,
Ով քրքրում է գրքեր հատորով,
Բայց իր պապերի, նահատակների
Մեղքը չի գտնում ու չի հասկանում՝
Աստված ինչի՞ է անվերջ մեզ պատժում,
Մատաղ կյանքեր է դեպ երկինք տանում։
Գրում եմ, ջնջում, մտքերս խառնում,
Ա՛խր, այսպես բան, ուրիշ տեղերում
Ո՞վ է հանդիպում։
Որ գան, դուրս հանեն սեփական տնից,
Գռփեն, թալանեն, զրկեն մեզ կյանքից,
Հետո, շատ բարձր՝ ատյանում դատի,
Մեր անունները սևացնեն կրկին։
Սա անլսելի փաստ է, ո՛վ մարդիկ,
Դատեն անմեղին՝ այն էլ ազգովի...

21.04.2016թ.

*

* *

Տիեզերական է արդարությունը քո,
Տե՛ր իմ զորարավոր։
Ես հավատում եմ քո արդար դատին,
Քո սուրբ գործերին,հզոր պատգամին,
Որ ամեն անհատ,ամեն շնչավոր,
Մի օր կկանգնի իր խղճի առաջ,
Որ մենք կոչում ենք Աստծո դատաստան։
Ես գիտեմ,որ դու,աչքեր,ականջներ
Ունես ամենուր,
Միայն լեզուն քո գործի չես դնում,
Որ խոսքը քո սուրբ չլսեն նրանք,
Ովքեր խախտում են կանոնները այն,
Որ գրվել են դեռ շատ դարեր առաջ
Սրբասուրբ գրքում,որ քո վեհ շնչով
Անվանել ենք մենք՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ....

23.07.2016թ

*

* *

Հրեշտակները չեն մեռնում, մարդի՛կ,
Այլ սլանում են դեպ հեռու երկինք,
Դեպի այլ աշխարհ,ուր չկա խավար,
Ոչ էլ՝ նենգ ու դավ,
Սրբի դեմքերով սատանի ճտեր,
Որ երդում կառնեն պիղծ բերանի մեջ։
Նրանք թռչում են դեպի սուրբ օրրան,
Ուր տերն է Աստված՝ մեծ սերը մարդկանց։
Հրեշտակները տարբերվում են միշտ՝
Տխուր աչքերով,խոնարհ հայացքով,
Բարի ժպիտով ու ոսկե սրտով։
Նրանք գալիս են՝ աշխարհը մաքրեն

Ու չարը առնեն շատ հեռու տանեն։
Նրանք գալիս են,որ պայքար մղեն
Ու մութ խավարը սուրբ լույսով ճեղքեն։
Հրեշտակները ընծա են նրանց,
Ովքեր ծնում են գիտուն ու հանճար,
Որ ծառա լինեն մարդկանց հավիտյան։
Հրեշտակները չեն մեռնում, մարդի՛կ,
Նրանք ապրում են հավերժի միջին...

30.03.2012թ

ԿՅԱՆՔ-ԵՂԱՆԱԿ

Մի օր արև է՝
Պայծառ ու շենշող,
Մի օր փոթորիկ՝
Աշխարհը ցնցող։

Մի օր շատ շոգ է,
Ու տոթ է դրսում,
Մի օր սաստկացող
Ցրտից ենք մրսում։

Փոփոխական է
Եղանակն այսպես,
Փոփոխական է
Մեր կյանքը նույնպես։

Մի օր ծով խինդ է
Մեր հոգուն պատում,
Մի օր անսահման
Թախիծ մեր սրտում...

2012թ.

*

* *

Զոն հայրենիքիս

Ձեռքումս ունեմ ես լի մի գավաթ՝
Արյան պես կարմիր շիրայով լցված:
Սրտումս ունեմ լոկ մի ցանկություն,
Որ կենաց ձոնեմ հողիդ սրբասուրբ:
Եկան զավթիչներ փայլող սրերով,
Սարեր ու ձորեր իրար խառնելով,
Քո դաշտում բուսած ալպյան մանուշից
Արցունք քամեցին, իսկ քարից՝ արյուն:
Լազուր կապույտում ձեռք ձեռքի տված
Շարք էին կանգնել ամպերը մթնած,
Բայց դու անկարող թշնամու դիմաց
Ելել ես հպարտ և ոչ թե պարտված:
Դու դարը օրիդ ենթակա դարձրու՛,
ԵՎ ոչ թե օրդ դարին ծաղրածու,
Թե մահ դու տեսնես քո ճանապարհին,
Մի նոր ծնունդ դու պարգև տու՛ր կյանքին,
Թե բողոք ունես չար բախտի դիմաց,
Էլ մի՛ հապաղիր, սանձի՛ր դու նրան:
Դարերն են եղել քո լուռ գրիչը,
Իսկ դու՝ պատմիչն ու հրահանգիչը:
Ես քեզ մաղթանքներ ընծա բերեցի՝
Որպես մի կենաց հողիդ զավակի:
Թե հպարտ եմ ես միայն քեզանով,
Քո Մասիս սարով, Սևանա լճով:

Մենք պետք է զարկենք բաժակ բաժակի,
ՈՒ ձոնենք կենացը քո ազատ հողի,
Գովք անենք երկնին, որ քեզ վեր հանի,
Օրհնանք պարգևի ամեն մի քարիդ:
Թե իմ կենացը անշուք էր, երկի՛ր,
Ինձ մի՛ կշտամբիր, անփորձ է որդիդ:

*

* *

Լուռ ես: Լավ, ես էլ կլռեմ:
Արի՛ մենք հարգենք լռությունը մեր,
Այն չխաթարենք, այլ անձայն խոսենք,
Խոսենք աչքերով, մարմնի ժեստերով,
Մենք սեր գովերգենք, նաև միություն,
Որ երջանկացրեց քեզ, ի՛մ ցնծություն:
Ես քո աչքերում մեծ սեր եմ կարդում,
Իմ հանդեպ տածած հարգանք, ջերմություն,
Որ պարուրեցին այս խելառ կյանքում:
Ափդ ափիս մեջ կուզեմ ես առնել,
Որ դու էլ զգաս, որ թանկ ես հավետ,
Որ քո ծնունդը կօրհնեմ առհավետ,
Որ քեզնով կապրեմ, քեզնով կարարեմ,
Հորս օջախում քեզ հարս կդարձնեմ:
Ուզում եմ երկար՝ մինչ խոր ծերություն,
Ամեն լուսաբաց, նաև մայրամուտ,
Քեզ հետ ողջունել ու ճամփա գցել,
Ի՛մ ուրախություն:
Պաշտում եմ նայել անթարթ աչքերիդ,
Ու միշտ զարմանալ բյուրեղյա փայլից,
Ապա քո գանգուր, չքնաղ վարսերի խաղով հիանալ,

Բարակ շուրթերիդ մեղմիկ ժպիտով,
Ու նուրբ մատներիդ քնքուշ սահանքով
ապշել ես կրկին:
Ես հիանում եմ քո իմաստալից, նուրբ գեղեցկությամբ,
Որ դարձնում է քեզ մարմարե արձան,
Այն լավագույնը՝ անձեռակերտների մեջ, անթիվ շարքում,
Որ ապրեցնում է, ապագա կերտում,
Ինչու՞ չէ նաև ոմանց կործանում...

20.05.2020 թ.

*

* *

Տարիներ հետո, երբ մենք կլինենք ծեր ամուսիններ,
Ես երդվում եմ քեզ՝ էլի կպաշտեմ ժպիտդ, ի՛մ սեր,
Եվ արտաքինդ, նաև ներքինդ, որ ինձ գրավեց լոկ մի վայրկյանում:
Ես հավետ քոնն եմ, քո մի մասնիկը,
Ով աղոթում է ու չի ամաչում ծնկի գալ գավթում,
Ու փառաբանել մեր սուրբ տիրոջը,
Ու գոյությունդ իմ դժվար կյանքում:
Անգամ տասը տարուց, թե կուզես՝ հարյուր,
Իմ սերը նույնչափ ուժ է քեզ տալու:
Երբ լինես շատ ծեր, տկար ոտքերով,
Շատ թույլ ձեռքերով, դողդոջուն շուրթով,
Ես խոստանում եմ ամուր հենարան լինել քեզ կյանքում:
Ես հիացական ժպիտը դեմքիս
Միշտ կհետևեմ ամեն շարժումիդ,
Ամեն մի բառդ ես կդրոշմեմ սիրող իմ սրտին:
Դու մի՛ վախեցիր շուտ ծերանալուց,
Ա՛խր աչքերդ, հո չե՞ն ծերանում,
Ա՛խր քո սիրտը, հո չի՞ փոքրանում,

Իսկ անմար սերդ թողնում-չքանում:

Ես քեզ կընդունեմ նորից նույն ձևով,

Ինչպես այն օրը, երբ հանդիպեցինք մեր Իջևանում...

02.06.2020 թ.

*

* *

Եռագույն ես դու՝ ալ կարմիր, կապույտ ու ծիրանագույն,

Բայց կարմիրը քո կուզեմ ես փոխել,

Հերիք է արդեն արյուն մենք թափենք,

Ու հայոց հողը կարմիրով ներկենք,

Մեր հայորդիներին մենք մատաղ անենք,

Սրբապիղծ թուրքին ընծա մատուցենք:

Մի՞թե արյունն է գինը մայր հողի,

Մի՞թե մայրը մեր կյանքեր կխլի,

Որդի կսպանի կամ մատաղ կանի, որ երկար ապրի:

Իսկ դուք՝ եղբայրնե՛ր, սիրասո՛ւն հայեր,

Մտածե՞լ եք, թե հողն առանց հայի ինչ եք անելու,

Ձեր սիրուն հարսին ում ձեռքն եք տալու,

Երբ նրա սերը հողն է մեր գրկում,

Ու սուրբ արյունով ծաղկունքը ջրում:

Իսկ դուք՝ սևազգե՛ստ, սգավո՛ր մայրեր,

Առանց ձեր ձագի հողն ինչների՞դ է,

Այդ հողի տակ է ձեր կորյուն որդին,

Ու չի դառնալու մյուս աշխարհից,

Ու չի ծլելու գարնան տաք շնչից,

Ու չի ժպտալու արևածագին,

Ոչ էլ փարվելու սև մայրամուտին:

Ես քո կարմիրը, հպա՛րտ եռագույն,

Հաղթական գույնով փոխել եմ ուզում:

Որ էլ չշեշտենք գույնը արյունի,
Ու սուգը հայի,
Այլ միշտ մենք ձգտենք լոկ հաղթանակի:
Տատս միշտ կասի.
-Լացը, ի՛մ որդի, միշտ լաց կբերի:
Եկե՛ք չլացենք ու չբողոքենք,
Նահատակների արյունը երգել
Պետք չէ, եղբայրնե՛ր, սուրբ գործը երգե՛ք,
Նրանց կռիվը, պայքարը զորեղ,
Որ տիտաններին վայել էր, ահեղ:
Երգելուց բացի՝ եկեք միանանք,
Ու սուրբ զոհերին պարտքերը մեր տանք:
Այս դարը, մարդի՛կ, խեղճին կուլ կտա,
Ուր մնաց՝ գթա ու թիկունք դառնա:
Եկե՛ք մեր լացը փոխենք սուրբ գործի,
Թեկուզ ծիծաղի, բայց խնդրում եմ ձեզ
Անտունի նման էլ ձեռք չպարզեք,
Ու խնդրանք չանեք անտարբեր բոլոր
Այն երկրներին, որ թքած ունեն հայի փուչ բախտին…

12.09.2018 թ.

*

* *

Մի՞թե այս կյանքում զենքի լեզուն եք միայն հասկանում,
Խոսքը չե՞ք կարող կիրառել դաշտում,
Ուր մարտ չեն մղում՝ լեզու են գտնում,
Խոսքով են հաղթում, հպատակ դարձնում
Սև ոսկով հարուստ, անխելք ազերուն:
Ես երդվում եմ քեզ, հայրենի՛ք իմ թանկ,
Որ խոսքի արվեստ պիտի սովորեմ,

Հետո բանակցնեմ, հաղթանակ տանեմ,
Որ Հայաստանս էլ զոհ չտեսնի,
Ու էլ չխեղդվի սգավոր հայ մոր արյուն-արցունքից,
Որ դրոշապատ դագաղներ բազում
Էլ չհայտնվեն Եռաբլուրում,
Ու խունկի հոտը էլ չտարածվի Հայկի սուրբ երկրում:
Դուք էլ ինձ լսե՛ք, մատղա՛շ հայդուկներ,
Սուրը պատյանում չենք դնի երբեք,
Բայց սովորելով կփրկենք կյանքեր,
Կփոխենք դերեր, աշխարհի տերեր:
Մենք թույլ չենք տալու օտար ազգերին
Որոշել ելքը հայի պայքարի կամ ավելի վատ՝
Բախտը մեր երկրի, մեր Հայաստանի…
(Դուք ինձ վստահեցրիք, որ ամեն ինչ իմ ձեռքերում է: Ես Ձեր շնորհիվ սկսեցի փնտրել իմ հզոր Ես-ին ու գտա: Հիմա Չեխիա չէ, լուսին էլ կհասնեմ: Շնորհակալ եմ, որ հանդիպեցինք... պարո՛ն...)

19.04.2020 թ.

*

* *

Այս նամակը քեզ գրում եմ արդեն
Շուրջ երկու ամիս,
Գրում եմ, ջնջում, պատռում, դեն նետում,
Չեմ հանգստանում, բառեր չեմ գտնում:
Ես չեմ հասկանում՝ ո՞նց ներում հայցեմ,
Ո՞նց սիրտդ շահեմ, ժպիտդ կորզեմ,
Ա՜խր ես ազնիվ, շիտակ եմ կյանքում,
Ու խաբել մարդկանց բնավ չեմ փորձում:
Ես քեզ պատմել եմ՝ ինչ եմ ես կարծում,
Ինչ եմ երազում, ինչի եմ ձգտում:
Երբեք չեմ փորձել քո վստահության

Մաքուր ծովակը պղտորել հանկարծ,
Փոթորկել հոգիդ ու անէանալ:
Դու ինձ կներե՞ս, հետս կխոսե՞ս,
Ես չեմ ցանկացել սիրտը քո փշրել,
Ես-դ էլ ծաղրել ու ոտնահարել:
Ես զուտ հոգիս եմ քո առաջ բացել,
Որ զուր երազներ դու չհորինես,
Ու դրանց տրվես, կեղծ կյանքով ապրես:
Հազար նամակ ես կրակին տվի,
Փոշի դարձրեցի, քամուն բաշխեցի,
Բայց քո տողերը կիսատ մնացին:
Սա սեր ես կոչե՞մ, թե՞ կապվածություն,
Բայց ինձ տանջում է, սիրտս կաշկանդում,
Լեզուս էլ կապում, միտքս բթացնում,
Ու չի ստացվում կնքել բաժանում:
Ես ինձ զգում եմ հոգով շա՛տ տկար,
Որ քեզ ցավեցրի, չքնա՛ղ, նու՛րբ էակ:
Օրեր, ամիսներ, գուցե տարիներ,
Որ անցնեն, գնան,
Դու կմոռանաս այն խենթ պատանուն,
Ով չհասկացավ, որ սեր էր ապրում,
Ու հիմարաբար թողնում-հեռանում...
Ների՛ր ու փնտրի՛ր իրական կեսիդ, երջանի՛կ եղիր…

12.01.2020 թ.

*

* *

Երազանքս թևեր առավ,
Ինձնից թռավ ու հեռացավ,

Անդարձ գնաց ու չքացավ,
Մութ քաղաքի փողոցով թաց,
Ուր անձրևի կաթիլները
Կաթ-կաթ թափվում,
Ընկնում են ցած:
Մռա՛յլ քաղաք,
Սևով ծածկի՛ր իմ աչքերի
Ալ կարմիրը, որ ես դառնամ
Մի աննկատ, անտես ստվեր,
Որ բվական կյանք կվարի,
Գիշերները փողոց կելնի:
Գիշերային փնտրտուքս
Կծառայի նրա համար,
Որ քեզ գտնեմ, ի՛մ երազանք...
Ասում են՝ խոսքը թռչուն է կարծես,
Որ թռավ գնաց, չես բռնի հավետ:
Այդ միտքը հիմա կաշկանդում է ինձ,
Ճնշում մտքերս, սաստում իմ լեզվին:
Ու չեմ հասկանում, ինչպե՞ս ես խոսեմ,
Ինչպե՞ս ճիշտ ձևով խոսքերս կապեմ,
Որ կյանքում մեկ սիրտ անգամ չջարդեմ,
Որ գեթ մեկ հոգի սրախեղդ չանեմ,
Որ ես անիմաստ չդարձնեմ
Ոմանց գոյությունը խեղճ:
Լեզվի կապանքը դժվար է պահել,
Առավել ևս այն կառավարել.
Չէ՞ որ գիտուն ենք մենք մեզ համարում,
Ու սրան-նրան անվերջ խրատում:
Եկե՛ք հասկանանք, որ ամեն անհատ
Իր խելքը ունի գործելու համար...

12.08.2014 թ.

*

* *

Հարգարժան Կ. Վարդապետյանին

Ասում են՝ ամեն մի բժիշկ
Նախ պետք է լինի հմուտ հոգեբան,
Ապա նոր՝ գործի նվիրյալ գիտակ:
Ես նման մեկին, որ գիտեմ հաստատ:
Նա իր խոսքերով հոգիս լավ բանաց,
Հարցուփորձ արեց, ու բանից պարզվեց,
Որ ես տկար չեմ, այլ մեր մեջ ասած՝
Հերթական անգամ «լուրջ» սիրահարված:
Ես էլ անդադար հոգուս ծովակում լող էի տալիս,
Բայց սրտիս ցավը հանգիստ չէր տալիս:
Մի տեսակ խեղդում ու ճնշում էր ինձ,
Նույնիսկ հենց հիմա:
Բժի՛շկ, բայց կարծես սիրուս չհասնեմ.
Սիրտս հուշում է, որ գարուններս աշուն կդառնան,
Ու հարսանիքիս ձեզ հրավիրել չեմ կարողանա…

*

* *

Պարո՛ն լեյտենանտ, դու ինձ կներես,
Բայց դու, որ հաստատ, գինդ չգիտես,
Ա՛խր դու կարծես եղբայր մեզ լինես,
Հոգատար ընկեր, ով մեր «ցավերը»
Ուզում է կիսել,
Նաև հայրաբար ճիշտ կողմնորոշել,
Չնայած, որ մեզ դու տարեկից ես:
Անվերջ ուղղորդել մեր դժվար գործում,

Նաև սփոփել կարոտի հարցում,
Չէ՞ որ մեզ տնից մի ոտնաչափ չի ցավոք բաժանում,
Ոչ էլ մի բլուր, այլ անչափելի մեծ տարածություն:
Կյանքում, թե հետո մենք չհանդիպենք,
Ես հո լավ գիտեմ, որ անունդ դեռ պիտի ես լսեմ
Հայոց բանակի մեծ նվիրյալների՝
Պատվի ու փառքի հզոր շարքերում,
Ու այդ ժամանակ հպարտ կլինեմ,
Որ մենք միասին ենք ծառայել հեռվում՝
Մեր Արցախ երկրում....
(Բախտս բերեց, որ հանդիպեցինք, պարո՛ն Ղարիբյան…)

*

* *

Նստել եմ բակում հորս օջախի,
Ու արբել եմ ես պարտեզի բույրից,
Որ ինձ է հասնում շքեղ ծաղկունքից,
Ականջս սրած քամու լուռ կանչին,
Ու մեր թթենու տերևի շարժին՝
Ես ինձ զգում եմ դրախտի միջին:
Աչքերս փակել, երազում եմ ես,
Մտքով շրջում եմ աշխարհներ անտես,
Ապա նայում եմ գյուղիս բլրակին՝
Աչքս հառելով մշտավառ խաչին,
Հազար երանի նրա վառ մտքին,
Ով մեզ հիշեցրեց հավատքի ուղին:
Ամեն գյուղացի, ով խաչին նայի,
Թո՛ղ նա մտածի, նաև գիտակցի՝
Հավատքով պիտի կյանքը կառուցի:
Իսկ քեզ, երկրացի՛ս, համագյուղացի՛ս,

Թո՛ղ Աստծո աջը զորավիգ լինի....

*

* *

Հե՜յ դո՛ւ՝ մարդ կոչվող հողածի՛ն էակ,
Մի բան լավ հիշի՛ր՝ ամենաթանկդ
Դու նվեր չանես ամեն հիմարի,
Ժամանակը քո անգին է, անգին,
Դու միշտ հետևի՛ր նրա ընթացքին:
Այսօր ջահել ես, նոր ես կյանք մտնում,
Վաղն արդեն չկաս, երկինք ես ճախրում:
Կյանքն ընծաներ կբերի բազում,
Բայց ժամանակդ վերուստ է տրվում....

*

* *

Մի հրեղեն ձի երանի լիներ,
Իր բաշին առներ ու ինձ տուն տաներ:
Ճեղքեր թշնամու սիրտը բանակի
Ու մորս հասցներ:
Նրա ճերմակած մազերին անգամ համբույր կտայի,
Դողացող ձեռքին՝ ջերմություն ու ուժ,
Որ սևահողով ափերը լեցուն
Դեպի հոր պարզի,
Ուր ես կլինեմ, թե էլ «ՉԼԻՆԵՄ»...

*

* *

Մարդիկ լինում են երկու տեսակի՝
ՄԱՐԴ մեծատառով, «մարդ» չակերտավոր:
Ես էլ նստել եմ ու միտք եմ անում,
Թե որ խմբին եմ հիմա պատկանում:
Մի՞թե այս կյանքը երկու բևեռ է զուտ պարունակում.
Մեկը վերևն է՝ ամպին է հասնում,
Մյուսն էլ արդեն անդունդն է վազում,
Բայց ո՞նց կլինի նման բաժանում.
Չէ՞ որ կենտրոնում իմ տեղն է պահվում,
Ով այս աշխարհում լո՛կ մարդ է կոչվում...